**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**5 մայիսի 2018 թվականի N Մ- 347- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԲԱԴԵՆ-ՎՅՈՒՐՏԵՆԲԵՐԳԻ ԵՐԿՐԱՄԱՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի մայիսի 2-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի կողմից Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտենբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղի հասցեով ստացված բեռի (65 տեղ, 600 կգ ընդհանուր քաշով, 572 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,000 եվրո, «Արարատյան» մաքսատուն-վարչություն, բեռի ցանկերը կցվում են) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանում Գերմանական Կարմիր խաչի Բադեն-Վյուրտենբերգի երկրամասային կազմակերպությանը՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Ոչ պաշտոնական թարգմանություն*

Հայաստանում Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղ

Դրոյի փողոց 22/5

Երևան, Հայաստան

Բեռի ցուցակ/հաշիվ ապրանքագիր

N 01 and 02/18 Touran

*Ստացող՝ Հայաստանում Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղ*

Տեղափոխման ամսաթիվ ապրիլ, 2018 Մեքենա՝ VW Touran ID.N°.WV GZZZ1TZ9W028297

| N | Քանակ | Կապոց | Ապրանք | Քաշը | Արժեք |
|---|---|---|---|---|---|
| 1 | 50 | Փաթեթ | Լվացքի փոշի փրկարար վրանների մաքրման համար | 213 կգ | 250 € |
| 2 | 2 | հատ | Դատարկ գազի բալոններ փրկարարական վրանների ջեռուցման համար | 23կգ | 60 € |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | 236կգ | 310€ |

Ցուցակը կազմվել է՝ 22.03.2018

Շտուտգարտ՝ 22.03.2018

Ստորագրություն և կնիք

Բեռնման պատասխանատու՝ պարոն Լեխլեր

Հավաստագիր Ամսաթիվ/Կնիք/

Ստորագրություն

**Այս ապրանքները օգտագործվում են միայն մարդասիրական օգնության համար եւ ենթակա չեն վաճառքի:**

Բեռի ցուցակի մանրամասն նկարագիր կետ 1
50 տուփ Լվացքի փոշի, յուր.՝ 4,26կգ

Բեռի ցուցակի մանրամասն նկարագիր կետ 2
2 հատ դատարկ գազի բալոններ փրկարարական վրանի համար

213կգ

23կգ

Հայկական ոչ առևտրային կազմակերպություն
Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղ Հայաստանում
Դրոյի 22/5,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

## Բեռի ցանկ – Հաշիվ/ապրանքագիր

Nr. 02/18 S_yncro

*Ստացող՝* *Հայաստանում Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղ*

Տեղափոխման ամսաթիվ՝ Ապրիլ 2018թ. Մեքենա՝ VW Syncro ID.N°.WV 2ZZZ70ZTH050408

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | | 8 | Փաթեթ | Վրանի պատյան և պահեստամաս 200 և 300 տեսակի համար | 255կգ | 200եվրո |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | | |
| | | | | | 255 կ գ | 200 € |

Ցուցակը պատրաստված է՝ 23.03.2018

Բեռնման պատասխանատու՝ պարոն [illegible]
Հավաստագիր Ամսաթիվ/Կնիք/
Ստորագրություն

Շտուտգարտ, 22.03.2018
Կնիք/ Ստորագրություն

Հաշիվ-ապրանքագիր՝ մաքսատուն ներկայացնելու համար

Բեռի ցուցակի մանրամասն
նկարագիր կետ 1

| | |
|---|---|
| 1 փաթե թ վրանի պատյան 200 տե ս ակ ի | 31,5կգ |
| | 5,0կգ |
| 1 փաթեթ գիբել 200 տե ս ակ ի | 27,5կգ |
| 1 փաթե թ ամրակներ 200 տեսակի | 8,0կգ |
| 1 փաթե թ պահեստամասեր 200 տեսակի | |
| 1 փաթեթ վրանի պատյան 300 տեսակի | 57,0 կ գ |
| | 19,0 կգ |
| 1 փաթե թ գիբել 300 տեսակի | 30,0 կ գ |
| 1 փաթե թ ամ ր ակ ն ե ր 300 տեսակի | 25,0 կգ |
| 1 փաթեթ պահեստամասեր 300 տեսակի | |

*Ոչ պաշտոնական թարգմանություն*

Հայկական ոչ առևտրային կազմակերպություն
Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղ Հայաստանում
Դրոյի 22/5,
Երևան, Հայաստանի Հանրապետություն

## Բեռի ցանկ – Հաշիվ/ապրանքագիր

Թողարկված է՝ 01/18 Syncro

Հետևյալ ապրանքները նվիրատվություն են Հայաստանում Գերմանական Կարմիր խաչից ԳԿԽ երևանյան մասնաճյուղին: (տես առանձին նվիրատվությունների վկայականներ)

Տեղափոխման ամսաթիվ՝ ապրիլ 2018

| N | քանակ | փաթեթ | նյութ | կշիռ | արժեք |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | Ստվարաթղթե արկղեր | Փրկարարական վրանի պահեստամասեր՝ ջրի և գազի ջեռուցման համակարգի համար | 72կգ | 1 եվրո |
| 2 | 1 | ապրանք | Գազի տեղադրման հարմարանք (գազի ջեռուցման համար) | 14կգ | 1եվրո |
| 3 | 2 | ապրանք | Դատարկ գազի բալոն | 23կգ | 60եվրո |
| | | | | 109կգ | 62եվրո |

Ցուցակը տրված է՝ 22.03.2018

Շտուտգարտ, 22.03.2018

Կնիք և ստորագրություն

Հաշիվ-ապրանքագիր՝ մաքսատուն ներկայացնելու համար

Մանրամասն նկարագրություն՝ կետ 1

1 ստվարաթղթե արկղ փրկարարական վրանի պահեստամասեր՝ գազի ջեռուցման համակարգի համար 50,0կգ

1 ստվարաթղթե արկղ փրկարարական վրանի պահեստամասեր՝ ջրի ջեռուցման համակարգի համար 22,0կգ

Մանրամասն նկարագրություն՝ կետ 2

1 դատարկ գազի բալոն՝ վրանի ջեռուցման համար 11,5 կգ

1 դատարկ գազի բալոն՝ վրանի ջեռուցման համար 11,5 կգ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**5 մայիսի 2018 թվականի N Մ- 348 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործականծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի մայիսի 2-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստան-Արցախ հիմնադրամի կողմից Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի հասցեով ուղարկված բեռի (481 արկղ, 6,576 կգ ընդհանուր քաշով, 121,976.66 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ 2,800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման և բաշխման ծրագիրը:

2. Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղին՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն բեռը բաշխելու մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն

Բ. Սարգսյան

Fund for Armenian Relief

**Բեռնարկղ GLDU 964867-5-ի բաշխման ցանկ**

| # | Ապրանքի անվանումը | Քանակ | Չափման միավոր | ՀՕՖ-ի Բարեգործական ճաշարանների շահառուներ | ՀՕՖ-ի կողմից իրականացվող Աղքատության հաղթահարումը Տավուշի մարզում ծրագրի շահառուներ | ՀՕՖ-ի ամառային ճամբարի շահառուներ | Բերդի տարածաշրջանի արտադպրոցական խմբակներ | ՀՕՖ Կրթական ծրագրերի ուսանողներ | Երեխաների աջակցության կենտրոն հիմնադրամ | Վանաձորի տարեցների տուն հիմնադրամ | Իջևանի առողջության առաջնային պահպանման կենտրոն ՓԲԸ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հիգիենայի պարագաների հավաքածու (2 հատ սրբիչ, 2 հատ օճառ, 1 հատ շամպուն, 1 հատ ատամի մածուկ, 3 հատ ատամի խոզանակ, 1 հատ եղունգ կտրիչ, 1 հատ փափուկ խաղալիք, 4 հատ գրպանի անձեռոցիկ, 1 հատ սանր, 1 հատ ինքնակպչուն սպեղանի) | 345 արկղ (2070 փաթեթ) | փաթեթ | 1000 | 470 | 200 | | 200 | 100 | 100 | |
| 2 | Կանացի օգտագործված պայուսակներ | 17 | արկղ | 10 | 7 | | | | | | |
| 3 | Մանկական տակդիրներ | 5 | արկղ | 2 | | | | | 3 | | |
| 4 | Օգտագործված դեկորատիվ բարձեր | 25 | արկղ | 5 | 10 | | | | | 10 | |
| 5 | Լոգարանի օգտագործված պարագաներ | 1 | արկղ | 1 | | | | | | | |
| 6 | Օգտագործված սուրճի գավաթներ | 3 | արկղ | 2 | 1 | | | | | | |
| 7 | Օգտագործված բաժակների հավաքածու | 7 | արկղ | 4 | 3 | | | | | | |
| 8 | Օգտագործված ափսեներ | 11 | արկղ | 6 | 5 | | | | | | |
| 9 | Օգտագործված խոհանոցային աքսեսուարներ | 5 | արկղ | 3 | 2 | | | | | | |
| 10 | Օգտագործված խոհանոցային պլաստիկ պարագաներ | 17 | արկղ | 10 | 7 | | | | | | |
| 11 | Օգտագործված կաթսաներ և թավաներ | 2 | արկղ | 2 | | | | | | | |
| 12 | Օգտագործված գորգեր | 2 | արկղ | 1 | 1 | | | | | | |
| 13 | Օգտագործված խոհանոցային պարագաներ | 2 | արկղ | 2 | | | | | | | |
| 14 | Օգտագործված քնապարկեր | 4 | արկղ | | | 4 | | | | | |
| 15 | Օգտագործված պայուսակ | 3 | արկղ | 3 | | | | | | | |
| 16 | Օգտագործված գրապայուսակներ | 7 | արկղ | 3 | 4 | | | | | | |
| 17 | Օգտագործված սննդի պայուսակներ | 4 | արկղ | 4 | | | | | | | |
| 18 | Օգտագործված կարի պարագաներ | 2 | արկղ | | 2 | | | | | | |
| 19 | Թելեր | 14 | արկղ | 5 | 5 | | 4 | | | | |
| 20 | Մեծահասակների տակդիրներ | 2 | արկղ | 2 | | | | | | | |
| 21 | Օգտագործված ատամնաբուժական ռենտգեն սարքավորում | 1 | արկղ | | | | | | | | 1 |
| 22 | Դպրոցական պիտույքների հավաքածու (2 հատ տետր, 10 հատ գրիչ, 1 տուփ գունավոր մատիտ, 10 հատ գծագրական մատիտ, 1 հատ մկրատ, 1 հատ սրիչ, 2 հատ քանոն, 2 հատ ռետին) | 120 արկղ (1200 հավաքածու) | հավաքածու | 400 | 300 | 200 | | 200 | 100 | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**7 մայիսի 2018 թվականի N Մ-349-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մայիսի 3-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից Երևանի քաղաքային համայնքի համար ձեռք բերված դրոշները և ժապավենները (81 տեղ, 1,039 կգ ընդհանուր քաշով, 12,701.60 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 51,848.72 չինական յուան, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**10 մայիսի 2018 թվականի N Մ-350-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի N Մ-277-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 26-ի N 01.1/14-2/7654-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 3-ի N 06/3-8/22082-18 եզրակացությունները, ինչպես նաև հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մայիսի 3-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված մարզագույքը (317 տեղ, 6,000 կգ ընդհանուր քաշով, 1,528,940 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1,158,750 «ԵՏՄ» բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 6-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Մարզագույքի ներմուծում» ծրագրի մասին» N Մ-277-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**11 մայիսի 2018 թվականի N Մ - 351 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N Մ-147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մայիսի 11-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է**.

1. Սահմանել, որ «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված կոպիտ սղոցված չմշակված մարմարից ուղղանկյուն բլոկ, մարմարե երեսապատման սալիկները, քար կտրող հաստոցի սկավառակները, մասերը՝ մետաղական հոլովակները (18,520 կգ ընդհանուր քաշով, 3,671 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» մքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մարտի 16-ի «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի եզդիների «Մալակե Տաուսի» տաճարի կառուցում և հարակից տարածքների կառուցապատում» ծրագրի մասին» N Մ-147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**15 մայիսի 2018 թվականի N Մ-352-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N Մ-510-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մայիսի 11-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ո ւ մ է.**

1. Սահմանել, որ «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից Երևանի քաղաքային համայնքի համար ձեռք բերված մանկական խաղահրապարակների խաղասարքերը և մարզասարքերը (338 տեղ, 18,170 կգ ընդհանուր քաշով, 185,180 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 12,260 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 10-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում» ծրագրի մասին» N Մ-510-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 353 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ՝ ԶԲԱՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 15-ի N 01.1/14-2/8712-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի ապրիլի 27-ի N 02/14/54154-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի ապրիլի 26-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/4327-18, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2018 թվականի ապրիլի 26-ի N 03/07-1/4656-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 10-ի N 06/3-8/23791-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 182,077,982 դրամ ընդհանուր արժողությամբ «Եվրամիությունը հանուն երիտասարդության՝ զբաղունակություն և կայունություն» ծրագիրը (կցվում է):

2. «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Ա. Եսայան

«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի կողմից

«04» մայիսի 2018թ.

Եվրոպական Միությունը հանուն երիտասարդության՝ զբաղունակություն և կայունություն

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Զարգացնել անապահով ընտանիքների 350 երիտասարդների աշխատունակությունը և ներուժը՝ որակյալ կրթության, վերապատրաստման հնարավորությունների և աշխատաշուկայում անհրաժեշտ մասնագիտական, ձեռնարկատիրական և այլ հմտությունների ձեռքբերման միջոցով. |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների օրենքներով նախատեսված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագրի ֆինանսական աղբյուր է հանդիսանում Եվրոպական Միությունը (EU4Youth), ՍՕՍ մանկական գյուղեր Ավստրիան և Ավստրիական Զարգացման Գործակալությունը: |
| 4. | Ծրագիրը կատարողը | Ծրագիրը իրականացնում է «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը՝ ( ՀՎՀՀ՝ 03517269, ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչարի 8, բն. 18-19 ): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվելու է ք.Երևանում և ք. Իջևանում, Տավուշի Մարզ, ՀՀ: Ծրագիրը առնչվում է սոցիալական բնագավառին: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 01.05.2018-31.12.2020 թվականների ընդհանուր բյուջեն կազմում է մոտավորապես 182 077 982 ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներ են հանդիսանում խոցելի ընտանիքների և խնամքի հաստատությունների 15-35 տարեկան 350 երիտասարդներ՝ ք.Երևանում և ք. Իջևանում: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրն իրականացվելու է 01.05.[illegible] թվականների ընթացքում: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Ծրագրի մասնագիտական [illegible] շահառուների հետ անմիջականորեն աշխատող անձնակազմի աշխատավարձը 3 տարվա համար կազմում է մոտ 53 274 600 ՀՀ դրամ (4 սոցիալական աշխատող), (տվյալ գումարի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>2. Գույքի ձեռքբերում [illegible] 3 տարվա համար կազմում է մոտ 1 432 495 ՀՀ դրամ (ծրագրային ծախս): |

2

| | | |
|---|---|---|
| | | 3. Գործունեության իրականացման [illegible] վարձակալված տարածքի վարձավճար և կոմունալ ծառայություններ (ծրագրային ծախսեր) 3 տարվա համար կազմում է մոտ 8 790 309 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>3.1. վարձակալված տարածքի վարձավճար՝ 5 860 206 ՀՀ դրամ<br>3.2. կոմունալ ծառայություններ՝ 2 930 103 ՀՀ դրամ<br>4. Գրենական պիտույքներ և գրասենյակային պարագաներ 3 տարվա համար կազմում է մոտ 2 930 103 ՀՀ դրամ (ծրագրային ծախս):<br>5. Այլ ծրագրային ծախսեր 3 տարվա համար կազմում են մոտ 53 392 988 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>5.1. կարճատև ուսուցում՝ 17 758 200 ՀՀ դրամ (ծրագրի մասնակիցների մասնագիտական վերապատրաստում)<br>5.2. աշխատակազմի սուպերվիզիա՝ 118 388 ՀՀ դրամ (մասնագիտական աջակցություն անձնակազմին)<br>5.3. ներդրումաշնորհներ՝ 35 516 400 ՀՀ դրամ ( այս գումարը ստացողներն են՝ խոցելի ընտանիքների և խնամքի հաստատությունների 15-35 տարեկան 350 երիտասարդներ որպես բիզնեսի սկսման սկզբնական կապիտալ)<br>6. Գրասենյակի տեխնիկական բազայի ապահովում 3 տարվա համար կազմում է մոտ 3 462 849 ՀՀ դրամ (ծրագրային ծախսեր):<br>7. Տպագրություններ, թարգմանություններ (ուսումնական ձեռնարկներ) 18 950 367 ՀՀ դրամ (ծրագրային ծախսեր), (որից 10 714 114 ՀՀ դրամի չափով հարկային արտոնություն չի պահանջվում):<br>8. Տեսանյութեր և բրոշյուրներ 3 տարվա համար կազմում է մոտ 2 297 517 ՀՀ դրամ<br>9. Միջոցառումներ (սեմինարներ, կոնֆերանսներ) համար նախատեսված դահլիճ և սնունդ՝ 4 605 293 ՀՀ դրամ (ծրագրային ծախսեր):<br>10. Կազմակերպական ծախսերը՝ 3 տարվա համար կազմում են մոտ 32 941 461 ՀՀ դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Սարքավորումների և գույքի ձեռքբերում 3 տարվա համար կազմում է մոտ 4 895 344 ՀՀ դրամ, այդ թվում՝<br>1.1. գույքի ձեռքբերում՝ 1 432 495 ՀՀ դրամ<br>1.2. սարքավորումների ձեռքբերում՝ 3 462 849 ՀՀ դրամ<br>2. Գրենական պիտույքների և պարագաների ձեռքբերում 3 տարվա համար կազմում է մոտ 2 930 103 ՀՀ դրամ:<br>3. Վարձակալված տարածքի վարձավճար՝ 3 տարվա համար կազմում է մոտ 5 860 206 ՀՀ դրամ<br>4. Աշխատակազմի սուպերվիզիա 3 տարվա համար կազմում է մոտ 118 388 ՀՀ դրամ (մասնագիտական աջակցություն անձնակազմին)<br>5. Տպագրությունների, թարգմանությունների (ուսումնական ձեռնարկների) ձեռքբերում 3 տարվա համար կազմում է մոտ 8 236 253 ՀՀ դրամ:<br>6. Տեսանյութերի և բրոշյուրների ձեռքբերում 3 տարվա համար կազմում է մոտ 2 297 515 ՀՀ դրամ:<br>7. Միջոցառումների (սեմինարների, կոնֆերանսների) համար նախատեսված |

| | | |
|---|---|---|
| | | դահլիճի և սննդի ձեռքբերում 3 տարվա համար կազմում է մոտ 4 605 293 ՀՀ դրամ:<br>8. Կոմունալ ծառայություններ (ծրագրային ծախսեր) 3 տարվա համար կազմում է մոտ 2 930 103 ՀՀ դրամ<br>9. Գրասենյակի տեխնիկական բազայի ապահովում 3 տարվա համար կազմում է մոտ 3 462 849 ՀՀ դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսերը՝ 01.05.2018 - 31.12.2020 թվականների համար, կազմում են մոտ 32 941 461 ՀՀ դրամ, որը համապատասխանաբար կազմում է բյուջեի 18 տոկոսը :<br>Այդ թվում՝<br>1. Աշխատակազմի (վարչական անձնակազմի) աշխատավարձ 3 տարվա համար կազմում է մոտ 28 910 350 ՀՀ դրամ (թվով 2 աշխատակից)<br>2. Տրանսպորտային միջոցի սպասարկում 3 տարվա համար կազմում է մոտ 3 853 529 ՀՀ դրամ:<br>3. Բանկային ծախսեր՝ 3 տարվա համար կազմում է մոտ 177 582 ՀՀ դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում կազմակերպությունը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, կրթության և գիտության նախարարությունների, Տավուշի մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, երիտասարդության հարցերով զբաղվող տեղական և միջազգային հասարակական կազմակերպությունների, պետական և մասնավոր ձեռնարկությունների, ինչպես նաև կրթական և միջին մասնագիտական հաստատությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է նվիրատու կազմակերպությունների և դրանց կառույցների կողմից՝ պարբերական ստուգայցերի և հաշվետվությունների միջոցով:<br>Սահմանված կարգով տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Ազգային տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ս.Մարգսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 մայիսի 2018 թվականի N Մ- 354 - Ա**
**քաղ. Երևան**

**«ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ (ՍՈԱՐ)-ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ» ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆ ՄՏԱՎՈՐ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴԿԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N 01.1/14-2/8503-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N 02/14/54897-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի մայիսի 10-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/4717-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 10-ի N 06/3-8/23800-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան 58, բն. 1, ՀՎՀՀ՝ 00148272) իրականացվող՝ 7,185,900 դրամ արժողությամբ «Ես կարող եմ» համապետական սպորտային փառատոն մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող մարդկանց մասնակցությամբ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Սաթենկար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01000902) 2018 թվականի ապրիլի 26-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շապիկների, կիսատաբատների և գլխարկների մատակարարում՝ 1,015,900 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սերվիս Գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08418795) 2017 թվականի մայիսի 4-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է փառատոնի համար անհրաժեշտ գույքի վարձակալում՝ 770,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Նյու Հորիզոն գրուպ ինկ» ընկերության հայաստանյան մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 00930386) 2018 թվականի մարտի 30-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հյուրանոցային ծառայությունների մատուցում՝ 5,400,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Առաջարկել «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՈԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամին սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՕԱՐ)-Հայաստան»

բարեգործական հիմնադրամի գործադիր

[illegible]րեն Հ.Մուրադյանի կողմից

07 մայիս 2018

# ԾՐԱԳԻՐ

«Ես կարող եմ» համապետական սպորտային փառատոն՝
մտավոր և ֆիզիկական խնդիրներ ունեցող մարդկանց մասնակցությամբ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Ես կարող եմ» փառատոնի կազմակերպման միջոցով<br>• ֆիզիկական և մտավոր խնդիրներ ունեցող մարդկանց ինտեգրում հասարակությանը,<br>• մարզական կարողություններ դրսևորելու հնարավորության ստեղծում,<br>• իրենց կարևորությունը զգալու և իրենց կարողունակությամբ ինքնավստահություն ձեռք բերելու հնարավորություն |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | ԱՄՆ-ի «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն» (ՍՕԱՐ) հիմնադրամ՝ 400, Կինգ օֆ Պրուսիա, Փենսիլվանիա, 19406, ԱՄՆ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Ծնողազուրկ հայ երեխաների օգնության միություն (ՍՕԱՐ)-Հայաստան» բարեգործական հիմնադրամ<br>ք. Երևան, Թբիլիսյան խճ. 19, հեռ.՝ 098 23 25 18 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստան, 2310, Կոտայքի մարզ, ք. Ծաղկաձոր (Հրազդանի տարածաշրջան), Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիր:<br>Բնագավառը՝Սոցիալական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 7 185 900 (յոթ միլիոն հարյուր ութսունհինգ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Ես կարող եմ» փառատոնի մասնակիցները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2018 թվականի մայիսի 24-ից 27-ը |

2

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՍՕԱՐ ԲՀ-ն կազմակերպում է «Ես կարող եմ» համապետական սպորտային փառատոն հատուկ կարիքներ ունեցող մարդկանց մասնակցությամբ: Մրցապայքարը ծավալվելու է մայիսի 25-26-ը՝ 6 մարզաձևերում (բոչիա, սեղանի թենիս, էստաֆետա, բասկետբոլ, ֆուտբոլ և թիավարություն): Մասնակիցները մայիսի 24-27-ն են լինելու Ծաղկաձորում: Կազմակերպվելու են բացման և փակման արարողություններ/պարգևատրման հանդիսակարգ-համերգ (24.05.2018 և 26.05.2018): Գիշերակացը և սնունդը ապահովում է ՍՕԱՐ հիմնադրամը: Փառատոնն իրականացնելու բյուջեն կազմում է 7 185 900 (յոթ միլիոն հարյուրութսունհինգ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ: Ժամկետները՝ 2018 թվականի մայիսի 24-ից 27-ը (կազմակերպչական աշխատանքները մեկնարկել են 2017-ի դեկտեմբերից): |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Փառատոնի 210 մասնակիցների համար ձեռք են բերվում՝ մարզական հագուստ (270 մարզաշապիկ, 170 մարզաշորտ, 32 գլխարկ) 1 015 900 (մեկ միլիոն տասնհինգ հազար ինը հարյուր) ՀՀ դրամով, միջոցառումն իրականացնելու համար վարձակալվում է տեխնիկա (բեմ, ձայնային և լուսային սարքավորումներ) 770 000 (յոթ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամով: Ապահովում ենք 4 օրվա երեքանգամյա սնունդ և գիշերակաց Ծաղկաձոր քաղաքում 5 400 000 ( հինգ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամով: Ընդհանուր գումարը կազմում է 7 185 900 (յոթ միլիոն հարյուրութսունհինգ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցություն պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում հիմնադրամը համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և տեղական ինքնակառավարման մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունը կատարվելու է բարեգործի կողմից և սահմանված կարգով՝ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ներկայացվելու է հաշվետվություն: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 մայիսի 2018 թվականի N Մ- 355 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 2-ի N 01.1/14-2/7843-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 4-ի N 06/3-4/22439-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, անհատ բարերար Հայկ Վլադիմիրի Բալյանի (անձնագիր՝ N 4615831330, տրված՝ 27.05.2015 թ.) կողմից ուղարկված Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված երեք խմբաքանակ հավաքովի տնակների ներմուծման ծրագիրը՝

1) 3 տեղ, 6,000 կգ ընդհանուր քաշով, 150,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ԵՏՄ բեռ.

2) 5 տեղ, 10,000 կգ ընդհանուր քաշով, 250,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ԵՏՄ բեռ.

3) 5 տեղ, 11,200 կգ ընդհանուր քաշով, 250,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ԵՏՄ բեռ:

Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 356 - Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N Մ-1283-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N 01.1/14-2/8500-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մայիսի 10-ի N ՆՁ/22.2/5370-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/24166-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ցյուրիխի Էլեոնորեն հիմնադրամ - մանկական համալսարանական հիվանդանոցի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված լողական ախտորոշիչ սարքի տպիչ սարքը՝ բաղադրիչներով (1 տեղ, 4.70 կգ ընդհանուր քաշով, 4,850 շվեյցարական ֆրանկ արժեքությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 88 շվեյցարական ֆրանկ, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի դեկտեմբերի 12-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերականգնողական բժշկության զարգացմանը և բժշկասոցիալական խնդիրների բարելավմանը» ծրագրի մասին» N Մ-1283-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2018 թվականի N Մ- 357 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 4-ի N 01.1/14-2/8030-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մայիսի 7-ի N ՆՁ/22.2/5198-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 5-ի N 06/3-4/22690-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից Հայաստանի մանուկների հիմնադրամի հասցեով ստացված ստամնաբուժական պարագաները և նյութերը (735.55 կգ ընդհանուր քաշով, 12,385 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 3,316 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Ի լրումն մեր 2018 թվականի մայիսի 18-ի
N 15/15.1/7512-18 ելիցի

24 մայիսի 2018թ.

No 15/15.1/7939-18

ՈՒՂՂՈՒՄ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի N Մ-280-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռի ներմուծման մասին (Հայաստանի մանուկների հիմնադրամ)» N Մ-357-Ա որոշման 1-ի կետում «735.55 կգ ընդհանուր քաշով» բառերը փոխարինել «251.75 կգ ընդհանուր քաշով » բառերով:

ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**18 մայիսի 2018 թվականի N Մ- 358 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N Մ-280-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 7-ի N 01.1/14-2/8167-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 5-ի N 06/3-4/22919-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ԱՄՆ-ի Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից Հայաստանի մանուկների հիմնադրամի հասցեով ստացված տեխնիկան (938 կգ ընդհանուր քաշով, 54,643.02 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմում են 7,438.5 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի մարտի 27-ի «Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների զարգացում» ծրագրի մասին» N Մ-280-Ա (2015 թվականի սեպտեմբերի 16-ի N Մ-1006-Ա, 2016 թվականի հունվարի 29-ի N Մ-035-Ա և մայիսի 20-ի N Մ-410-Ա, 2017 թվականի մարտի 23-ի N Մ-217-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**18 մայիսի 2018 թվականի N Մ - 359 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 2-ի N 01.1/14-2/7778-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի մայիսի 2-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/4441-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 2-ի N 06/3-8/21862 -18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (23 տեղ, 4,060 կգ ընդհանուր քաշով, 52,754 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ 2,754 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» ծրագրի մասին» N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետարանին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)

Կոնտեյների համարն է՝ INKU 647521-6: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 52754.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 2754.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 4060.00 կգ, տեղերի քանակը 23:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 1050<br>280<br>2<br>1<br>8 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ.<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Հիգիենիկ կոմպլեկտ<br>Գրենական կոմպլեկտ | | **3197.64<br>1094.86<br>23.83<br>0.12<br>46.79** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 1050<br>280<br>2<br>1<br>8 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ.<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Հիգիենիկ կոմպլեկտ<br>Գրենական կոմպլեկտ | | **3197.64<br>1094.86<br>23.83<br>0.12<br>46.79** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Իջևանի տարածաշրջան) |
| 1050<br>280<br>2<br>1<br>8 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ.<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Հիգիենիկ կոմպլեկտ<br>Գրենական կոմպլեկտ | | **3197.64<br>1094.86<br>23.83<br>0.12<br>46.79** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 1050<br>280<br>2<br>1<br>8 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ.<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Հիգիենիկ կոմպլեկտ<br>Գրենական կոմպլեկտ | | **3197.64<br>1094.86<br>23.83<br>0.12<br>46.79** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 1050<br>280<br>2<br>1<br>8 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ.<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Հիգիենիկ կոմպլեկտ<br>Գրենական կոմպլեկտ | | **3197.64<br>1094.86<br>23.83<br>[illegible]<br>46.79** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում ([illegible] տարածաշրջան) |
| 1050<br>280<br>2<br>1<br>8 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ.<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Հիգիենիկ կոմպլեկտ<br>Գրենական կոմպլեկտ | | **3197.64<br>1094.86<br>23.83<br>0.12<br>46.79** | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սի[illegible] [illegible]որիսի տարածաշրջան) |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1050<br>280<br>2<br>1<br>8 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ.<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Հիգիենիկ կոմպլեկտ<br>Գրենական կոմպլեկտ | | 3197.64<br>1094.86<br>23.83<br>0.12<br>46.79 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 1050<br>280<br>2<br>1<br>8 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ.<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Հիգիենիկ կոմպլեկտ<br>Գրենական կոմպլեկտ | | 3197.64<br>1094.86<br>23.83<br>0.12<br>46.79 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 1050<br>280<br>2<br>1<br>8 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ.<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Հիգիենիկ կոմպլեկտ<br>Գրենական կոմպլեկտ | | 3197.64<br>1094.86<br>23.83<br>0.12<br>46.79 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 550<br>150<br>1<br>5 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Գրենական կոմպլեկտ | | 1674.96<br>586.53<br>11.91<br>29.24 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 700<br>200<br>2<br>5 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Գրենական կոմպլեկտ | | 2131.76<br>782.04<br>23.83<br>29.24 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 700<br>200<br>2<br>5 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Գրենական կոմպլեկտ | | 2131.76<br>782.04<br>23.83<br>29.24 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 1231<br>373<br>1<br>5 | Հատ<br>Հատ<br>Հատ<br>Կոմպլ. | Շապիկ<br>Կիսաշրջազգեստ<br>Հեծանիվ<br>Գրենական կոմպլեկտ | | 3748.81<br>1458.50<br>11.91<br>29.24 | Մ-002-Ա<br>Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 4060.00 | 52754.00 | |

02528755
ՎԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2018 թվականի N Մ- 360 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 5-ի N 01.1/14-2/8155-18, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի մայիսի 10-ի N ԱՊ/ԱՍՄ-2-1/4702-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 5-ի N 06/3-8/22689 -18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված խաղադաշտի արհեստական խոտածածկը՝ տեղադրման նյութերով ու պարագաներով, և մարզագույքը (111 տեղ, 7,582 կգ ընդհանուր քաշով, 30,402.50 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 2,512,225 դրամ, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Բանանց» ֆուտբոլային ակումբի համար խաղադաշտի արհեստական խոտածածկի ներմուծում և տեղադրում» ծրագրի մասին» N Մ-1060-Ա որոշմամբ հաստատված (2018 թվականի ապրիլի 27-ի N Մ-336-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-373-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-1147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 3-ի N 01.1/14-2/7878-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 3-ի N 06/3-8/22065-18 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի մայիսի 5-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/4567-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (խտացրած կաթ՝ 26,190 հատ, 1,348,785 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, և բուսական յուղ՝ 11,460 հատ, 836,580 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

6/5.7

### *Բեռի բաշխման ցանկ*

ինվոյս N 17 17.04.2018

| N N | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (հատ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Խտացրած կաթ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 1104 | 46.533 |
| | | | Այգուտ | 138 | 1104 | 46.533 |
| | | | Մարտունի | 68 | 544 | 22.929 |
| | | | Դպրաբակ | 59 | 472 | 19.895 |
| | | | Վահան | 172 | 1376 | 57.998 |
| | | | Կալավան | 22 | 176 | 7.418 |
| | | | Բարեպատ | 5 | 40 | 1.686 |
| | | | Ձորավանք | 22 | 176 | 7.418 |
| | | | Լճաշեն | 46 | 368 | 15.511 |
| | | | Աղբերք | 43 | 344 | 14.499 |
| | | | Ճամբարակ | 152 | 1064 | 51.254 |
| | | | Անտառամեջ | 12 | 84 | 4.046 |
| | | | Գավառ | 18 | 126 | 6.070 |
| | | | Թթուջուր | 128 | 896 | 43.161 |
| | | Արմավիրի մարզ | Ալաշկերտ | 29 | 203 | 9.779 |
| | | | Գեղակերտ | 64 | 448 | 21.581 |
| | | | Արտաշատ | 42 | 294 | 14.162 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 11 | 77 | 3.709 |
| | | | Արտաշատ | 16 | 112 | 5.395 |
| | | | Գետազատ | 19 | 133 | 6.407 |
| | | | Վարդաշեն | 2 | 14 | 674 |
| | | | Մրգանուշ | 8 | 64 | 2.698 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 36 | 252 | 12.139 |
| | | | Աբովյան | 54 | 378 | 18.209 |
| | | Վայոց ձորի մարզ | Շատին | 20 | 160 | 6.744 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 210 | 10.116 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 294 | 14.162 |
| | | | Ակունք | 33 | 231 | 11.127 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 140 | 6.744 |
| | | Երևան | | 2551 | 15306 | 860.187 |
| | Ընդամենը | | | 4000 | 26190 | 1.348.785 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն* Բ. Զամբազյան

## *Բեռի բաշխման ցանկ*

ինվոյս ... 17.04.201...

| N N | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (հատ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Բուսական յուղ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 276 | 28.862 |
| | | | Այգուտ | 138 | 276 | 28.862 |
| | | | Մարտունի | 68 | 136 | 14.222 |
| | | | Դպրաբակ | 59 | 118 | 12.340 |
| | | | Վահան | 172 | 344 | 35.973 |
| | | | Կալավան | 22 | 66 | 4.601 |
| | | | Բարեպատ | 5 | 15 | 1.046 |
| | | | Ձորավանք | 22 | 66 | 4.601 |
| | | | Լճաշեն | 46 | 138 | 9.621 |
| | | | Աղբերք | 43 | 129 | 8.993 |
| | | | Ճամբարակ | 152 | 456 | 31.790 |
| | | | Անտառամեջ | 12 | 36 | 2.510 |
| | | | Գավառ | 18 | 54 | 3.765 |
| | | | Թթուջուր | 128 | 384 | 26.771 |
| | | Արմավիրի մարզ | Այաշկերտ | 29 | 87 | 6.065 |
| | | | Գեղակերտ | 64 | 192 | 13.385 |
| | | | Արտաշար | 42 | 126 | 8.784 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 11 | 33 | 2.301 |
| | | | Արտաշատ | 16 | 48 | 3.346 |
| | | | Գետազատ | 19 | 57 | 3.974 |
| | | | Վարդաշեն | 2 | 8 | 418 |
| | | | Մրգանուշ | 8 | 24 | 1.673 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 36 | 108 | 7.529 |
| | | | Արզական | 54 | 162 | 11.294 |
| | | Վայոց ձորի մարզ | Շատին | 20 | 60 | 4.183 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 90 | 6.274 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 126 | 8.784 |
| | | | Ակունք | 33 | 132 | 6.902 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 60 | 4.183 |
| | | Երևան | | 2551 | 7653 | 533.529 |
| | Ընդամենը | | | 4000 | 11460 | 836.580 |

**«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն** **Բ. Զամբազյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-374-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-1147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N 01.1/14-2/8489-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/24106-18 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/4796-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (հնդկաձավար՝ 11,000 կգ քաշով, 310,200 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, և ոլոռ՝ 11,000 կգ քաշով, 440,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային ու գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1147-Ա որոշմամբ [illegible] ծրագրի շրջանակներում:

2. Սույն [illegible] Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների [illegible]:

ՆԱԽԱԳԱՀ                                                   Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Բեռի բաշխման ցանկ

Ինվոյս N 18 18.04.2018

| NN | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հնդկաձավար | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 379 | 10.702 |
| | | | Այգուտ | 138 | 379 | 10.702 |
| | | | Մարտունի | 68 | 187 | 5.273 |
| | | | Դպրաբակ | 59 | 162 | 4.575 |
| | | | Վահան | 172 | 473 | 13.339 |
| | | | Կալավան | 22 | 61 | 1.706 |
| | | | Բարեպատ | 5 | 14 | 388 |
| | | | Զորավանք | 22 | 61 | 1.706 |
| | | | Լճաշեն | 46 | 127 | 3.567 |
| | | | Աղբերք | 43 | 118 | 3.335 |
| | | | Ճամբարակ | 152 | 418 | 11.7[illegible] |
| | | | Անտառամեջ | 12 | 33 | [illegible] |
| | | | Գավառ | 18 | 50 | [illegible] |
| | | | Թթուջուր | 128 | 352 | [illegible] |
| | | Արմավիրի մարզ | Այաշկերտ | 29 | 80 | [illegible] |
| | | | Գեղակերտ | 64 | 176 | [illegible] |
| | | | Արտաշատ | 42 | 116 | [illegible] |
| | | Արարատի մարզ | Վեդի | 11 | 30 | [illegible] |
| | | | Արտաշատ | 16 | 44 | [illegible] |
| | | | Գետազատ | 19 | 52 | [illegible] |
| | | | Վարդաշեն | 2 | 6 | 155 |
| | | | Մրգանուշ | 8 | 22 | 620 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 36 | 99 | 2.792 |
| | | | Աբովյան | 54 | 149 | 4.188 |
| | | Վայոց ձորի մարզ | Շատին | 20 | 55 | 1.551 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 83 | 2.327 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 116 | 3.257 |
| | | | Ակունք | 33 | 91 | 2.559 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 55 | 1.551 |
| | | Երևան | | 2551 | 7012 | 197.830 |
| | Ընդամենը | | | 4000 | 11000 | 310.200 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն՝*   *Բ. Զամբազյան*

6/5.8

## *Բեռի բաշխման ցանկ*

հնվոյս IN 18 18.04.2018

| N N | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | Շահառուների քանակը | | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքը ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Ոլոռ | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 379 | 15.180 |
| | | | Այգուտ | 138 | 379 | 15.180 |
| | | | Մարտունի | 68 | 187 | 7.480 |
| | | | Դպրաբակ | 59 | 162 | 6.490 |
| | | | Վահան | 172 | 473 | 18.920 |
| | | | Կալավան | 22 | 61 | 2.420 |
| | | | Բարեպատ | 5 | 14 | 550 |
| | | | Ձորավանք | 22 | 61 | 2.420 |
| | | | Ճաշեն | 46 | 127 | 5.060 |
| | | | Աղբերք | 43 | 118 | 4.730 |
| | | | Ճամբարակ | 152 | 418 | 16.720 |
| | | | Անտառամեջ | 12 | 33 | 1.320 |
| | | | Գավառ | 18 | 50 | 1.980 |
| | | | Թթուջուր | 128 | 352 | 14.080 |
| | | Արմավիրի մարզ | Այաշկերտ | 29 | 80 | 3.190 |
| | | | Գեղակերտ | 64 | 176 | 7.040 |
| | | | Արտաշատ | 42 | 116 | 4.620 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 11 | 30 | 1.210 |
| | | | Արտաշատ | 16 | 44 | 1.760 |
| | | | Գետազատ | 19 | 52 | 2.090 |
| | | | Վարդաշեն | 2 | 6 | 220 |
| | | | Մրգանուշ | 8 | 22 | 880 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 36 | 99 | 3.960 |
| | | | Արզական | 54 | 149 | 5.940 |
| | | Վայոց ձորի մարզ | Շատին | 20 | 55 | 2.200 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | 30 | 83 | 3.300 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | 42 | 116 | 4.620 |
| | | | Ակունք | 33 | 91 | 3.630 |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 55 | 2.200 |
| | | Երևան | | 2551 | 7012 | 280.610 |
| | Ընդամենը | | | 4000 | 11000 | 440.000 |

***«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն*** ***Բ. Զամբազյան***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-375-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-1147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 2

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N 01.1/14-2/8488-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 14-ի N 06/3-8/24421-18 ու Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N ԱՊ/ԱնՄ-2-1/4794-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված սննդամթերքը (լոբի՝ 22,000 կգ քաշով, 45,320 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային ու գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

*Բեռի բաշխման ցանկ*

Invoice 18.04.2018

| N N | Ապրանքի անվանում | Շահառուներն ըստ մարզերի | | Շահառուների քանակը | Շահառուներին բաշխվող քանակը (կգ) | Արժեքն ըստ փաթեթների (ռուսական ռուբլի) |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոբի | Գեղարքունիքի մարզ | Գետիկ | 138 | 759 | 1,564 |
| | | | Այգուտ | 138 | 759 | 1,564 |
| | | | Մարտունի | 68 | 374 | 770 |
| | | | Դպրաբակ | 59 | 325 | 668 |
| | | | Վահան | 172 | 946 | 1,949 |
| | | | Կալավան | 22 | 121 | 249 |
| | | | Բարեպատ | 5 | 28 | 57 |
| | | | Ջորավանք | 22 | 121 | 249 |
| | | | Լճաշեն | 46 | 253 | 521 |
| | | | Աղբերք | 43 | 237 | 487 |
| | | | Ճամբարակ | 152 | 836 | 1,722 |
| | | | Անտառամեջ | 12 | 66 | 136 |
| | | | Գավառ | 18 | 99 | 204 |
| | | | Թթուջուր | 128 | 704 | 1,450 |
| | | Արմավիրի մարզ | Այաշկերտ | 29 | 160 | 329 |
| | | | Գեղակերտ | 64 | 352 | 725 |
| | | | Արտաշար | 42 | 231 | 476 |
| | | Արարատի մարզ | Վեդի | 11 | 61 | 125 |
| | | | Արտաշատ | 16 | [illegible] | 181 |
| | | | Գետազատ | 19 | 105 | [illegible] |
| | | | Վարդաշեն | 2 | [illegible] | [illegible] |
| | | | Մրգանուշ | 8 | 44 | 91 |
| | | Կոտայքի մարզ | Չարենցավան | 3[illegible] | 198 | 408 |
| | | | Աբովյան | [illegible] | [illegible] | [illegible] |
| | | Վայոց ձորի մարզ | Շատին | [illegible] | 110 | 227 |
| | | Լոռու մարզ | Վանաձոր | [illegible] | 165 | 340 |
| | | Արագածոտնի մարզ | Թալին | [illegible] | [illegible] | [illegible] |
| | | | Ակունք | 3[illegible] | 182 | [illegible] |
| | | Տավուշի մարզ | Իջևան | 20 | 110 | 227 |
| | | Երևան | | 2551 | 14030 | [illegible] |
| | Ընդամենը | | | 4000 | 22000 | [illegible]20 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի տնօրեն՝　　　　Բ. Զամբրացյան*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-376-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1229-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 7-ի N 01.1/14-2/8165-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 5-ի N 06/3-8/22663-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-1229-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-732-Ա և դեկտեմբերի 22-ի N Մ-1153-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վեկ ինջինիրինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02595146) 2018 թվականի ապրիլի 23-ին կնքված՝ N 230418/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարզադպրոցի հովացման համակարգերի տեղադրման և մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 4,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                                                 Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-377-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 3-ի N 01.1/14-2/12881-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 26-ի N 06/3-8/21315-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի սեպտեմբերի 8-ի N Մ-731-Ա, դեկտեմբերի 22-ի N Մ-1157-Ա և 2018 թվականի մարտի 7-ի N Մ-135-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Դանիայի Թագավորության քաղաքացի Ջեյկոբ Պետերսենի հետ (անձնագիր՝ 207350358) 2018 թվականի մարտի 30-ին կնքված՝ N 01-30.03.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 570,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Ավստրիայի Հանրապետության քաղաքացի Լիա Նաջջարի հետ (անձնագիր՝ C86H6ZJV2) 2018 թվականի մարտի 30-ին կնքված՝ N 02-30.03.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 620,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) ԱՄՆ-ի քաղաքացի Անի Ջաֆերյանի հետ (անձնագիր՝ 506671090) 2018 թվականի ապրիլի 5-ին կնքված՝ N 01-05.04.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՄՁՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01514872) 2018 թվականի ապրիլի 3-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հատակ մաքրող սարքի ռետինե ժապավենների ձեռքբերում՝ 150,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Ջի էյ Թի Քաթինգ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00866378) 2018 թվականի ապրիլի 5-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պոլիվինիլքլորիդից (ՊՎՔ) գլանակների պատրաստում՝ 277,400 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-378-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1019-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 3-ի N 01.1/14-2/7879-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 3-ի N 06/3-8/22083-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 24-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո ստուդիաներ» ծրագրի մասին» N Մ-1019-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի Չարլզ Կալպակյանի հետ (անձնագիր՝ 12CK48482) 2018 թվականի մարտի 6-ին կնքված՝ N 01-06.03.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Կանադայի քաղաքացի Թալար Թալին Մանուկյանի հետ (անձնագիր՝ GH183384) 2018 թվականի մարտի 13-ին կնքված՝ N 01-13.03.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 650,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



3) Ֆրանսիայի Հանրապետության քաղաքացի Աստրիդ Սարկիսյանի հետ (անձնագիր՝ 09PH30966) 2018 թվականի ապրիլի 5-ին կնքված՝ N 01-05.04.18 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

8

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-379-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N Մ-051-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 3-ի N 01.1/14-2/7885-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 26-ի N 06/3-8/21332-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00057312) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի «ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Աղավնավանք գյուղի և Լոռու մարզի Քարաձոր համայնքի 14 ընտանիքի» ծրագրի մասին» N Մ-051-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Գոլդշին» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00257698) 2018 թվականի ապրիլի 19-ին կնքված՝ N 19/04 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական նյութերի մատակարարում՝ 10,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-380-Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՈԼԵՅԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 16-ի N 1/14-2/8769-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 17-ի N 06/3-8/25500-18 ու Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2018 թվականի մայիսի 16-ի N 1/06/631-18 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Վոլեյբոլի եվրոպական կոնֆեդերացիայի կողմից, որպես օժանդակություն, «Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված մարզագույքի (վոլեյբոլի ցանցեր՝ մեկ տեղ, 22 կգ ընդհանուր քաշով, 913.36 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 433.36 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի վոլեյբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-381-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 19-Ի N Մ-648-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ Մ Ա Ս Ի Ն

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 15-ի N 1/14-2/8714-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 10-ի N 06/3-8/24105-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01266593) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի «Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվող «Փյունիկ» ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-648-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի մարտի 14-ի N Մ-172-Ա, 2015 թվականի մարտի 13-ի N Մ-203-Ա, հուլիսի 24-ի N Մ-803-Ա և օգոստոսի 28-ի N Մ-913-Ա, 2016 թվականի նոյեմբերի 17-ի N Մ-1107-Ա, 2017 թվականի մարտի 31-ի N Մ-246-Ա և հունիսի 23-ի N Մ-562-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պոժմաստեր» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02265669) 2018 թվականի ապրիլի 27-ին կնքված՝ N 86 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կրակմարիչների ձեռքբերում՝ 342,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-382-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1435-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 16-ի N 1/14-2/8735-18 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 17-ի N 06/3-8/25504-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքի հին թատրոնի շենքի ու հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման» ծրագրի մասին» N Մ-1435-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի օգոստոսի 11-ի N Մ-700-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ինթեք էլեկտրիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00870691) հետ 2018 թվականի ապրիլի 27-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է էլեկտրական վահանների մատակարարում՝ 44,843,300 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　　　　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-383-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N Մ-336-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 17-ի N 1/14-2/8835-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 17-ի N 06/3-8/25474-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 1-ի N Մ-1060-Ա որոշման մեջ և կից ծրագրում փոփոխություններ կատարելու ու նույն ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)» N Մ-336-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «122,983,500 դրամ» բառերը փոխարինել «122,993,500 դրամ» բառերով.

2) որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում «110,983,500 դրամ» բառերը փոխարինել «110,993,500 դրամ» բառերով.

3) որոշմանը 1-ին կետի 3-րդ և 2-րդ կետի 2-րդ ենթակետերում «18,524,000 դրամ» բառերը փոխարինել «18,534,000 դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե[illegible]

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-384-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N Մ-1147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի 2018 թվականի ապրիլի 12-ի N Բ/Ձ-32 գրությունը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքային ու գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-1147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետում «Գերմանիայի «Դիակոնիա» միջազգային հիմնադրամ» բառերը փոխարինել «Գերմանիայի «ԱՄՐՈ» կազմակերպություն» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 մայիսի 2018 թվականի N Մ-385- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱԿ-Ի ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ «ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2018 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի ապրիլի 6-ի N 5/08.2/50613-18 և մայիսի 8-ի N 5/08.2/50829-18 գրությունները ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 17-ի N 1/14-2/8837-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի ապրիլի 27-ի N 02/14/54239-18, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2018 թվականի ապրիլի 27-ի N 04/15.1/2604-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 16-ի N 06/3-8/25431-18 ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2018 թվա-կանի ապրիլի 25-ի N 1/3/1-1/2429-18 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ  է.**

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 89,748,600 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 2016 թվականի մարտի 18-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին ու Արարատի քաղաքապետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
[illegible]
«8» «[illegible]» 2018թ.

# ԾՐԱԳԻՐ

ՀՀ բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 2016թ. մարտի 18-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | ՀՀ բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության և («Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ) «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2016թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի՝ շրջանակներում Արարատի մարզի Արարատ քաղաքային համայնքի աղբավայրի բարեկարգում և ենթակառուցվածքների ստեղծման շրջանակներում ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպություն (ՅՈՒՆԻԴՕ), Ավստրիա, Վիեննա, A-1400, P.O. Box 300 |
| 4. | Ծրագիրը կատարողը | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արարատի մարզ, ք.Արարատ:<br>Շրջակա միջավայրի պահպանություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության կողմից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի (ՀՀ կառավարության N1277 որոշման համաձայն) համար «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվում – **89 748 600ՀՀ դրամ**): Ծախսերի ուղղությունները և չափերը ըստ կետ 9-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ («Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ), ք.Երևան, Չ[illegible] 46: Ծրագրի ավարտից հետո աղբավայրի շահագործումը հանձնվելու է Արա[illegible] համայնքին: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.05.2018 - 31.12.2018թթ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՀ բնապահպանության նախարարության, [illegible]ունաբերական զարգացման կազմակերպության և «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի միջև 18.03.2016թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող ծրագիր՝ 01.05.2018-31.12.2018թթ. – **89 748 600 ՀՀ դրամ,** այդ թվում (ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների)՝<br>1. Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերում (2-4-րդ եռամսյակներ) – **27238.3 հազար ՀՀ դրամ,** այդ թվում՝<br>1.1. Տպագրական աշխատանքներ (հաշվետվությունների հրապարակում, իրազեկության բրոշյուրներ և այլն) (2-4-րդ եռամսյակներ)- **7804.7 հազար ՀՀ դրամ,**<br>1.2. Միջազգային պարբերականներում հրապարակումներ, կոնֆերանսներին մասնակցություն արտերկրում (2-4-րդ եռամսյակներ) - **6313.0 հազար ՀՀ դրամ,**<br>1.3. Իրազեկության բարձրացման նպատակով սեմինարների, աշխատաժողովների, կոնֆերանսների կազմակերպման ծառայություններ (2-4-րդ եռամսյակներ)- **3549.6 հազար ՀՀ դրամ,**<br>1.4. Լաբորատոր հետազոտության ծառայություններ (2-4-րդ եռամսյակներ) - **2327.0 հազար ՀՀ դրամ,**<br>1.5. Իրազեկման բարձրացման նպատակով մասնագիտական ծառայություններ(2-4-րդ եռամսյակներ) - **7244.0 հազար ՀՀ դրամ:**<br>2. Սարքավորումների ձեռքբերում (2-րդ եռամսյակ) – **8800.0 հազար ՀՀ դրամ,** այդ թվում՝<br>2.1. Հատուկ մեխանիզմների ձեռքբերում (1 հատ) - **8440.0 հազար ՀՀ դրամ,**<br>2.2. Աղբամաններ (8 հատ) - **360.0 հազար ՀՀ դրամ:**<br>3. Շենքերի և շինությունների կառուցման շարունակություն և ավարտ (1-3-րդ եռամսյակներ) – **38740.9 հազար ՀՀ դրամ,** այդ թվում՝<br>3.1. Արարատ քաղաքի աղբավայրի բարելավման և ենթակառուցվածքների ստեղծման, մարդու առողջության և շրջակա միջավայրի բացասական ներգործության կանխարգելում շարունակություն և ավարտ – **37483.2 հազար ՀՀ դրամ,**<br>3.2. Շինարարության որակի տեխնիկական հսկողության ծառայություններ – **702.7 հազար ՀՀ դրամ,**<br>3.3. Շինարարության հեղինակային հսկողություն - **555.0 հազար ՀՀ դրամ:**<br>4. Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում (4-րդ եռամսյակ) – **1205.0 հազար ՀՀ դրամ:** |

| | | |
|---|---|---|
| | | **5.** Գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերում (2-4-րդ եռամսյակ) – **2717.2 հազար ՀՀ դրամ**, այդ թվում՝<br>5.1 Գովազդային նյութեր (շապիկներ, թղթապանակներ, նոթատետրեր, օրացույց, գրիչներ, թղթե տոպրակեր և այլն) - **1367.2 հազար ՀՀ դրամ,**<br>5.2 Հատուկ հանդերձանք - **800.0 հազար ՀՀ դրամ,**<br>5.3 Գրասենյակային պարագաներ – **550.0 հազար ՀՀ դրամ:**<br>**6.** «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատավարձ - **11047.2 հազար ՀՀ դրամ** (1-4-րդ եռամսյակ): |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | **1.** Ծառայությունների և աշխատանքների ձեռքբերում – **27238.3 հազար ՀՀ դրամ**<br>**2.** Սարքավորումների ձեռքբերում – **8800.0 հազար ՀՀ դրամ**<br>**3.** Շենքերի և շինությունների կառուցման շարունակություն և ավարտ – **38740.9 հազար ՀՀ դրամ**<br>**4.** Գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերում – **2717.2 հազար ՀՀ դրամ** |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Կազմակերպչական ծախսեր – **12802.2 հազար դրամ**, այդ թվում<br>**1.** Աուդիտորական ծառայությունների ձեռքբերում - **1205.0** հազար ՀՀ դրամ<br>**2.** Գրասենյակային պարագաներ – **550.0** հազար դրամ:<br>**3.** «Շրջակա միջավայրի մոնիտորինգի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների աշխատավարձ - **11047.2 հազար ՀՀ դրամ** (1-4-րդ եռամսյակ): |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի, ՀՀ Արարատի մարզպետարանի, Արարատի քաղաքապետարանի և ՀՀ բնապահպանության նախարարության հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը: |

ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ　　　　　Ա.ԼԱԶԱՐԵՎ

Հեռ՝ 010 55 48 35

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2018 թվականի N Մ-386- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N Մ-293-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ** («Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ )

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի մայիսի 7-ի N 5/08.2/50818-18 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N 01.1/14-2/8486-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/24167-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի ծրագրի մասին» N Մ-293-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ա-Տեզ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07905651) 2018 թվականի ապրիլի 12-ին կնքված՝ N ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-18/02 պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով նախատեսված սեղմված բնական գազի ձեռքբերում՝ 2,040,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2018 թվականի ապրիլի 12-ին կնքված՝ N «ԴԱՊ-ԳՀԱՊՁԲ-18/01 պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերով նախատեսված բենզինի ձեռքբերում՝ 4,567,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2018 թվականի N Մ-387- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի N Մ-270-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 7-ի N 01.1/14-2/8161-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մայիսի 10-ի N ՆՁ/22.2/5343-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 7-ի N 06/3-8/23176-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (դեղորայք, լաբորատոր և բուժ. սարքեր ու պարագաներ՝ 14 արկղ, 118 կգ քաշով, 10,013.68 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 552.71 եվրո, ցանկը կցվում է, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 6-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագրի մասին» N Մ-270-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-388- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ, ԿՈՎԿԱՍԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ԽՈՍՐՈՎԻ ԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ» ՊՈԱԿ-Ի ՄԻՋԵՎ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-ԻՆ ԿՆՔՎԱԾ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ 2018 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 5/08.2/50666-18 և մայիսի 5-ի N 5/08.2/50809-18 գրությունները ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 2-ի N 01.1/14-2/7847-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի ապրիլի 27-ի N 02/14/54236-18, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2018 թվականի ապրիլի 27-ի N 04/15.1/2605-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/24164-18 ու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2018 թվականի մայիսի 2-ի և 15-ի NN 1/3/1-1/2505-18 ու 1/3/1-1/2755-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից իրականացվող՝ 120,280,000 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 2018 թվականի փետրվարի 28-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.



2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավարի կողմից
Հ.Հովհաննիսյան
«19».«04» 2018թ.

# ԾՐԱԳԻՐ

**ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 2018 թվականի փետրվարի 28-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Խոսրովի անտառ» պետական արգելոցում իրականացվելիք միջոցառումների ֆինանսավորման ծավալների (բյուջեի) համալրում՝ նպատակաուղղված պետական արգելոցի պահպանության բարելավմանը, ինչպես նաև «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կանոնադրական խնդիրների ավելի արդյունավետ կատարմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Կովկասի Բնության Հիմնադրամ, Թոյպենհոֆշտրասսե 18, 63067 Օֆֆենբախ, Գերմանիա |
| 4. | Ծրագրի կատարողը | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմ |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Արարատի մարզ, ք.Վեդի<br>«Բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանություն» |
| 6. | Ծրագրի բյուջեն | Կովկասի Բնության Հիմնադրամից ստացվելիք դրամական միջոցները մուտքագրվելու են «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի համար «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ»-ում բացված հատուկ հաշվում **120 280 000 ՀՀ դրամ**): Ծախսերի ուղղությունները և չափերը՝ ըստ կետ 9-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ, Արարատի մարզ, ք.Վեդի |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 20.04.2018թ. – 31.12.2018թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | ՀՀ բնապահպանության նախարարության, Կովկասի Բնության Հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 28.02.2018թ. կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի ծախսերը<br>20.04.2018թ. – 31.12.2018թ. – **120 280 000 ՀՀ դրամ**, այդ թվում՝ |



| | |
|---|---|
| | 1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում (2-4-րդ եռամսյակ) – **9 600,0 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում՝<br>• Բենզին «Ռեգուլյար» - 3045,0 հազ. ՀՀ դրամ<br>• Դիզելային վառելիք-1305,0 հազ. ՀՀ դրամ<br>• Սեղմված բնական գազ-4 400,0 հազ. ՀՀ դրամ<br>• Հակասառիչ հեղուկ-70,0 հազ. ՀՀ դրամ<br>• Շարժիչի յուղեր-180,0 հազ. ՀՀ դրամ<br>• Ավտոմեքենաների անիվներ-600,0 հազ. ՀՀ դրամ<br><br>2. Գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերում (2-4-րդ եռամսյակ) – **7 000,0 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում՝<br>• Արտադրական հագուստ- 6600,0 հազ. ՀՀ դրամ<br>• Գրասենյակային նյութերի ձեռքբերում-400,0 հազ. ՀՀ դրամ<br><br>3. Գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերում /բույսերի ձեռքբերում, սածիլներ/ (2-4-րդ եռամսյակ) – **50,0 հազ. ՀՀ դրամ**<br><br>4. Լաբորատոր նյութերի ձեռքբերում /դեղամիջոցներ ձիերի խնամքի համար/ (2-րդ եռամսյակ) – **395,0 հազ. ՀՀ դրամ**<br><br>5. Կենցաղային նյութերի ձեռքբերում (2-4-րդ եռամսյակ) – **820,0 հազ. ՀՀ դրամ**<br><br>6. Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում (2-4-րդ եռամսյակ) – **2 541,2 հազ. ՀՀ դրամ**, այդ թվում՝<br>• Կենցաղային ապրանքներ-291.2 հազ. ՀՀ դրամ<br>• Օգնության ցուցաբերման շարժական միավորներ /լապտեր, ջրաման, դանակ, սփրեյ/-2000.0 հազ. ՀՀ դրամ<br>• Փրկարարական և արտակարգ իրավիճակներում կիրառվող սարքեր /հավաքածու/-250.0 հազ. ՀՀ դրամ<br><br>7. Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում (2-4-րդ եռամսյակ) – **7000,0 հազ. ՀՀ դրամ**, |

| | | |
|---|---|---|
| | | 8. Վարչական՝ սարքավորումների ձեռքբերում /լուսանկարչական տեսախցիկների օբյեկտիվներ (2-4-րդ եռամսյակ) – **100,0 հազ. ՀՀ դրամ,**<br><br>9. Սարքավորումների ձեռքբերում (2-4-րդ եռամսյակ) - **19 710,0 հազ. ՀՀ դրամ,**<br>• Արևային համակարգի ստացման համակարգի տեղադրում-11000,0 հազ. ՀՀ դրամ<br>• Տեսահսկման համակարգ-5 710,0 հազ. ՀՀ դրամ<br>• Անօդաչու թռչող սարքեր-3 000,0 հազ. ՀՀ դրամ<br><br>10. Ծառայությունների ձեռքբերում (1-4-րդ եռամսյակ) – **19 693,8 հազ. ՀՀ դրամ,** այդ թվում՝<br>• Էլեկտրաէներգիայի ծառայության մատուցում-700,0 հազ. ՀՀ դրամ<br>• Գազամատակարարման ծառայության մատուցում-700,0 հազ. ՀՀ դրամ<br>• Միջազգային եւ միջքաղաքային հեռախոսային կապի ծառայությունների մատուցում-500,0 հազ. ՀՀ դրամ<br>• «Ինտերնետ» ծառայության մատուցում-900,0 հազ. ՀՀ դրամ<br>• Դոմենային անվանումներ-12,0 հազ. ՀՀ դրամ<br>• Վեբ հոսթինգ-30,0 հազ. ՀՀ դրամ<br>• Նավիգացիոն ծառայության մատուցում-670,8 հազ. ՀՀ դրամ<br>• Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցում-5 000,0 հազ. ՀՀ դրամ<br>• Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայության մատուցում-250,0 հազ. ՀՀ դրամ<br>• Ներքին փոստային սուրհանդակային ծառայությունների մատուցում-30,0 հազ. ՀՀ դրամ<br>• Խմելու ջուր /մաքուր/ ձեռքբերում-74,0 հազ. ՀՀ դրամ<br>• Առողջապահության ապահովագրման ծառայության մատուցում-1 900,0 հազ. ՀՀ դրամ<br>• Փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների մատուցում-500,0 հազ. ՀՀ դրամ |



| | | |
|---|---|---|
| | | • Աղբահանության ծառայության մատուցում-80,0 հազ. ՀՀ դրամ<br>• Հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ -145,0 հազ. ՀՀ դրամ<br>• Հակահրդեհային պաշտպանության ծառայության մատուցում-4 000,0 հազ. ՀՀ դրամ<br>• Այգիների պահպանման ծառայության մատուցում-600,0 հազ. ՀՀ դրամ<br>• Ցուցանակներ և հարակից առարկաների ձեռքբերում-600,0 հազ. ՀՀ դրամ<br>• Անասնաբուժական ծառայությունների մատուցում-852,0 հազ. ՀՀ դրամ<br>• Ներկայացուցչական ծառայություններ-2 000,0 հազ. ՀՀ դրամ<br>• Գործուղման ծախսեր ՀՀ տարածքում-150,0 հազ. ՀՀ դրամ<br><br>11. «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի անձնակազմի լրացուցիչ վարձատրություն (խրախուսում, յուրաքանչյուր ամիս) – **53 370,0 հազ. ՀՀ դրամ:** |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. Տրանսպորտային նյութերի ձեռքբերում – **9 600,0 հազ. ՀՀ դրամ,**<br>2. Գրասենյակային նյութերի և հագուստի ձեռքբերում- **7 000,0 հազ. ՀՀ դրամ,**<br>3. Գյուղատնտեսական ապրանքների ձեռքբերում-**50,0 հազ. ՀՀ դրամ,**<br>4. Լաբորատոր նյութերի ձեռքբերում- **395,0 հազ. ՀՀ դրամ,**<br>5. Կենցաղային նյութերի ձեռքբերում- **820,0 հազ. ՀՀ դրամ,**<br>6. Հատուկ նպատակային նյութերի ձեռքբերում- **2 541,2 հազ. ՀՀ դրամ,**<br>7. Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում – **7 000,0 հազ. ՀՀ դրամ,**<br>8. Վարչական սարքավորումների ձեռքբերում – **100,0 հազ. ՀՀ դրամ:**<br>9. Սարքավորումների ձեռքբերում - **19 710,0 հազ. ՀՀ դրամ,**<br>10. Ծառայությունների ձեռքբերում (գործարքի շրջանակներում ակնկալվում է ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում)- **19 693,8 հազ. ՀՀ դրամ:** |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 1. Գրասենյակային պարագաներ - **350,0 հազ. ՀՀ դրամ**<br>2. Կենցաղային նյութեր - **220,0 հազ. ՀՀ դրամ**<br>3. Հատուկ նպատակային այլ նյութեր – **230,0 հազ. ՀՀ դրամ** |

| | | |
|---|---|---|
| | | 3. Կոմունալ ծախսեր – 2  647,0 **հազ. ՀՀ դրամ**<br>• Էլեկտրաէներգիա – **700,0 հազ. ՀՀ դրամ**<br>• Գազամատակարարում – **700,0 հազ. ՀՀ դրամ**<br>• Միջազգային եւ միջքաղաքային հեռախոսային կապի ծառայություններ - **500,0 հազ. ՀՀ դրամ**<br>• Համացանց - **50,0 հազ. ՀՀ դրամ**<br>• Դոմենային անվանումներ - **12,0 հազ. ՀՀ դրամ**<br>• Վեբ հոսթինգ - **30,0 հազ. ՀՀ դրամ**<br>• Կոմունալ ծառայություններ - **150,0 հազ. ՀՀ դրամ**<br>• Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություն-**250,0 հազ.  ՀՀ դրամ**<br>• Ներքին փոստային սուրհանդակային ծառայություններ-**30,0 հազ. ՀՀ դրամ**<br>• Կենցաղային ծառայություններ-**80,0 հազ. ՀՀ դրամ**<br>• Հաշվապահական համակարգչային ծրագրային փաթեթների մշակման ծառայություններ-**145,0 հազ. ՀՀ դրամ** |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և  ՀՀ Արարատի  մարզպետարանի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հաշվետվություն է ներկայացվում բարեգործին, ինչպես նաև սահմանված կարգով տեղեկատվություն է ներկայացվում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին և ՀՀ բնապահպանության նախարարությանը |

«Խոսրովի անտառ»  պետական արգելոց»  ՊՈԱԿ-ի տնօրեն

Հ. Հովակիմյան

հեռախոս՝ 0234/21352/

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 մայիսի 2018 թվականի N Մ-389- Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 6-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Ջանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2018 թվականի ապրիլի 10-ի N 5/08.2/50640-17 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի ապրիլի 13-ի N 01.1/14-2/6955-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի ապրիլի 13-ի N 06/3-8/19071-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Ջանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 2018 թվականի փետրվարի 28-ին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 6-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Ջանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 2018 թվականի փետրվարի 28-ին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2018 թվականի ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Արկարգազ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09413044) 2018 թվականի մարտի 22-ին կնքված՝ N ՋԿՀ-ԳՀԱՊՁԲ-18/02 պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով նախատեսված սեղմված բնական գազի ծեռքբերում՝ 1,311,693 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ-390- Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԲԱՑ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 15-ի N 01.1/14-2/8716-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մարտի 13-ի N 02/14/4314-18, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2018 թվականի մարտի 14-ի N 03/07-1/2767-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 14-ի N 06/3-8/EE4B-001B-1199-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող՝ 9,050,052 դրամ ընդհանուր արժեքով «Հայաստանի ամերիկյան համալսարանի ու Հայաստանի Հանրապետության Պետական կառավարման ակադեմիայի գրադարաններում բաց մատչելիության հրատարակչական մոդելի ձևավորում» ծրագիրը (կցվում է):

2. Առաջարկել «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամին

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող, ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված



ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մա-տակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավար-տից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Պետական կառավարման ակադեմիա:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամ» կազմակերպության

Փոխնախագահ՝ Աշոտ Ղազարյանի կողմից

«16» մայիս 2018թ.

«Հայաստանի ամերիկյան համալսարանի և Պետական կառավարման ակադեմիայի գրադարաններում բաց մատչելիության հրատարակչական մոդելի ձևավորում»

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) համագործակցելով եվրոպական երկու բուհերի՝ Բերգենի և Տրանսիլվանիայի համալսարանների, և ՀՀ պետական կառավարման ակադեմիայի (ՊԿԱ) հետ (տես կից Eurasia 2017 CPEA-ST-10055 ծրագրային պայմանագիրը), դրամաշնորհ է ստացել «Հայաստանի ամերիկյան համալսարանի և Պետական կառավարման ակադեմիայի գրադարաններում բաց մատչելիության հրատարակչական մոդելի ձևավորում» ծրագրի իրականացման համար:<br>Ծրագրի նպատակն է ՀԱՀ-ի և ՊԿԱ-ի գրադարաններում ստեղծել բաց առցանց մատչելիության ինստիտուցիոնալ պահոցներ, որոնցում կտեղադրվեն պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների գիտական աշխատանքները՝ լայն հանրության կողմից բաց և անվճար օգտագործման համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Բարեգործի հասցեն հայերենով՝<br>Միջազգային կրթական համագործակցության նորվեգական կենտրոն<br>Ֆորտուն 1 փողոց, Բերգեն, Նորվեգիա<br>Հեռ: 55 30 38 00<br>Էլ. հասցե: post@siu.no<br>Բարեգործի հասցեն նորվեգերենով՝<br>Senter for internasjonalisering av utdanning (SIU) |

2

| | | |
|---|---|---|
| | | Fortunen 1, Bergen<br>Telefon: 55 30 38 00<br>E-post: post@siu.no |
| 4. | Ծրագրի կատարողը | «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ<br>Մարշալ Բաղրամյան պողոտա 40<br>Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն<br>ՀՎՀՀ՝ 01511187 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի ամերիկյան համալսարան (ՀԱՀ) հիմնադրամ<br>Մարշալ Բաղրամյան պողոտա 40 և 40/1,<br>Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն<br><br>Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա<br>Կիևյան փողոց 8<br>Երևան 0028, Հայաստանի Հանրապետություն<br><br>Բնագավառը՝ Կրթական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմելու է 9,050,052 ՀՀ դրամ (որը կազմում է 148,240 նորվեգական կրոն): Որպես հաշվարկման հիմք ընդունվել է Կենտրոնական Բանկի մարտի 29-ի 2018թ. օրվա համապատասխան փոխարժեքը: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ուսանողներ, գիտության և կրթության ոլորտների աշխատողներ, հետազոտողներ, դասախոսներ և այլ հետաքրքրված անձինք, ովքեր հնարավորություն կունենան օգտվել ՀԱՀ-ի և ՊԿԱ-ի գրադարանների կողմից տեղադրված բաց, առցանց մատչելի, անվճար գիտական աշխատանքներից: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 մարտ 2018թ. – 31 դեկտեմբերի 2019թ. (Հարկային արտոնությունները կկիրառվեն 01 մայիսի 2018թ. –ից հետո նախատեսված գործարքների վրա): |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները. Անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի բյուջեն ներկայացված է նորվեգական կրոնին համարժեք հայկական դրամով:<br>01.03.2018-31.12.2019<br>1. Ծրագրի կայքի ստեղծում - 600,000 ՀՀ դրամ<br>2. Ինստիտուցիոնալ պահոցի ստեղծում - 1,000,000 ՀՀ դրամ<br>3. Ծրագրի համակարգման աշխատանքներ - 1,800,000 ՀՀ դրամ |

| | | |
|---|---|---|
| | | 4. Կոնֆերանսի կազմակերպում – 1,180,000 ՀՀ դրամ<br>5. Կացության հետ կապված ծախսեր Հայաստանում - 750,000 ՀՀ դրամ<br>01.10.2018-31.12.2019<br>6. Ուսումնական գործուղումներ - 3,720,052 ՀՀ դրամ |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 01.03.2018-30.04.2018 - (հարկային արտոնություն չի ակնկալվում)<br>4. Կոնֆերանսի կազմակերպում – 388,475 ՀՀ դրամ (I-ին կոնֆերանս)<br>• Սննդի և հյուրընկալության կազմակերպում – 327,970 ՀՀ դրամ<br>• Նյութերի տպագրություն – 39,300 ՀՀ դրամ<br>• Գրենական պիտույքների ձեռքբերում – 21,205 ՀՀ դրամ<br>5. Կացության հետ կապված ծախսեր Հայաստանում 280, 000 ՀՀ դրամ (I-ին կոնֆերանս)<br>• Հյուրանոցային ծախսեր – 264,000 ՀՀ դրամ<br>• Տրանսպորտային ծախսեր – 16,000 ՀՀ դրամ<br>01.05.2018-31.12.2019 – (ակնկալվում է հարկային արտոնություն)<br>1. Ծրագրի կայքի ստեղծում - 600,000 ՀՀ դրամ<br>2. Ինստիտուցիոնալ պահոցի ստեղծում - 1,000,000 ՀՀ դրամ<br>• Ինստիտուցիոնալ պահոցի տեղադրում - 600,000 ՀՀ դրամ<br>• Գրադարանավարների վերապատրաստման դասընթացների կազմակերպում- 150,000 ՀՀ դրամ<br>• Թարգմանչական ծառայություններ - 100,000 ՀՀ դրամ<br>• Տվյալների տարածման և հեղինակային իրավունքի ռազմավարության մշակման ծառայություններ - 150,000 ՀՀ դրամ<br>4. Կոնֆերանսի կազմակերպում - 791,525 ՀՀ դրամ (II-րդ կոնֆերանս)<br>• Սննդի և հյուրընկալության կազմակերպում – 572,030 ՀՀ դրամ<br>• Նյութերի տպագրություն – 90,700 ՀՀ դրամ<br>• Գրենական պիտույքների ձեռքբերում -128,795 ՀՀ դրամ<br>5. Կացության հետ կապված ծախսեր Հայաստանում - 470,000 ՀՀ դրամ (II-րդ կոնֆերանս)<br>• Հյուրանոցային ծախսեր - 436,000 ՀՀ դրամ<br>• Տրանսպորտային ծախսեր - 34,000 ՀՀ դրամ |



| | | |
|---|---|---|
| | | 01.10.2018-31.10.2018 (ակնկալվում է հարկային արտոնություն)<br>6. Ուսումնական գործուղումներ - 3,220,052 ՀՀ դրամ<br>• Ուսումնական ուղևորություն Բերգենի համալսարան՝ 5 մասնակիցների ավիատոմսերի գնում - 2,500,052 ՀՀ դրամ<br>Հյուրանոցի և օրապահիկի գումարը վճարելու է Բերգենի համալսարանը՝ Նորվեգիայում:<br>01.01.2019-31.12.2019 (ակնկալվում է հարկային արտոնություն)<br>• Միջազգային կոնֆերանսի մասնակցության գործուղման ծախսեր - 1,220,000 ՀՀ դրամ (IFLA կոնֆերանսի գրանցման գումար, հյուրանոցի և օդանավի տոմսեր, վիզա, օդանավակայանից հյուրանոց երկու ուղղության տրանսպորտային ծախսեր): |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր | 01.03.2018-31.12.2019<br>3. Ծրագրի համակարգում - 1,800,000 ՀՀ դրամ<br>• Ծրագրի համակարգողի փոխհատուցում - 600,000 ՀՀ դրամ<br>• Վերադիր ծախսեր (վարչակազմի, հաշվապահության վարձատրություն, սպասարկման ծախսեր) - 1,200,000 ՀՀ դրամ |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կառավարության Մարդասիրական ծրագրերի համակարգող հանձնաժողով, ՀՀ Կրթության և գիտության նախարարություն: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի ընթացքում նախատեսված են եռամսյակային և տարեկան ամփոփ հաշվետվություններ ՀՀ կառավարության Մարդասիրական ծրագրերի համակարգող հանձնաժողովին: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2018 թվականի N Մ-391- Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 18-Ի N Մ-170-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
**(«Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 15-ի N 1/14-2/8721-18, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 17-ի N 06/3-8/25503-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից Ռուսաստանի Դաշնությունից ձեռք բերված բեռը (սարքավորումներ՝ 20,545 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ցանկը կցվում է, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մարտի 18-ի «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Նորարարության և տեխնոլոգիաների ինկուբացիոն կենտրոնի հիմնադրում» ծրագրի մասին» N Մ-170-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի N Մ-1066-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետ[illegible]վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳ[illegible]** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

---

**American University *of* Armenia**
**Հայաստանի Ամերիկյան Համալսարան**
A US-accredited institution affiliated with the University of California

25 ապրիլի, 2018թ

«Նորարարության և տեխնոլոգիաների ինկուբացիոն կենտրոնի հիմնադրում» ծրագրի շրջանակներում Հայաստանի ամերիկյան համալսարան հիմնադրամի կողմից ՌԴ-ում գործող «Նոբելևսկայա Պրակտիկա» ՍՊԸ-ից գնվող սարքավորումների ցանկ

| № | Ապրանքի կոդ | Նկարագրություն | Քանակ | Ընդհանուր արժեք, եվրո |
|---|---|---|---|---|
| 1 | * P1004105 * | Ազատ անկում 2-1 ժամանակաչափով: | | € 1 280,00 |
| 1.1 | 02001-00 | Հենակետ/բազա | 1 | |
| 1.2 | 02037-00 | Օժանդակ ձող, չժանգոտվող պողպատ, l = 600 մմ, d = 10 մմ | 1 | |
| 1.3 | 02043-00 | Մամլակ | 2 | |
| 1.4 | 09936-00 | Չափերիզ, l = 2 մ | 1 | |
| 1.5 | 02505-00 | Գնդակի կողպեք սխալ աշխատանքի ախտորոշման հանգույց | 1 | |
| 1.6 | 02502-01 | Պողպատե գնդակ, d = 19 մմ | 1 | |
| 1.7 | 13607-99 | Ժամանակաչափ 2-1 | 1 | |
| 1.8 | 11207-20 | Լուսային փակոց, կոմպակտ | 1 | |
| 1.9 | 07363-01 | Միացնող/կապող լար, 32 Ա, 1000 մմ, կարմիր | 1 | |
| 1.10 | 07363-02 | Միացնող/կապող լար, 32 Ա, 1000 մմ, դեղին | 2 | |
| 1.11 | 07363-04 | Միացնող/կապող լար, 32 Ա, 1000 մմ, կապույտ | 2 | |


40 Marshal Baghramyan Ave.
Yerevan 0019, Republic of Armenia
Phone: (+374 60) 69 40 40
(+374 10) 32 40 40
Fax: (+374 60) 61 25 12
E-mail: info@aua.am

U.S. Office
1000 Broadway, Suite 280
Oakland, California 94607
Phone: +1(510) 925-4282
Fax: +1(510) 925-4283

Facebook: AUArmenia
Twitter: AUAtweets
Youtube: AUAuploads
Website: aua.am


The American University of Armenia is accredited by the WASC Senior College and University Commission, 985 Atlantic Avenue, #100, Alameda, CA 94501, 510.748.9001

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | * P1199205 * | Դինամիկայի հիմնարար օրենքը (Նյուտոնի երկրորդ օրենքը) երթուղային գծով և ժամանակաչափով 4-4: | | € 4 725,00 |
| 2.1 | 11305-00 | Երթուղային գիծ, ալյումինե, 1.5 մ | 1 | |
| 2.2 | 11306-00 | Գլանիկների համար զամբյուղ, ցածր շփման շափյուղային առանցքակալներ | 1 | |
| 2.3 | 11308-00 | Ցածր շփման գործակցով զամբյուղի փակիչ, լայնություն- 100 մմ | 1 | |
| 2.4 | 11309-00 | Երթուղային գծի համակարգ | 1 | |
| 2.5 | 11202-14 | Խրոցակով մագնիսի համակարգ | 1 | |
| 2.6 | 11202-06 | Խցանով ձող | 1 | |
| 2.7 | 11202-05 | Խցանով խողովակ | 1 | |
| 2.8 | 11305-12 | Երթուղային գծի վերջնակետ | 1 | |
| 2.9 | 03935-03 | Պլաստիլին, 10 ձող | 1 | |
| 2.10 | 11305-10 | Երթուղային գծի ճախարակ | 1 | |
| 2.11 | 11305-11 | Ճախարակի բռնիչ | 1 | |
| 2.12 | 02412-00 | Մետաքսի թել, l = 200 մ | 1 | |
| 2.13 | 02205-01 | Ճեղքով կշռաքար, սև, 10 գ | 8 | |
| 2.14 | 02206-01 | Ճեղքով կշռաքար, սև, 50 գ | 4 | |
| 2.15 | 11306-10 | Ցածր շփման գործակցով զամբյուղի ծանրություն, 400 գ | 1 | |
| 2.16 | 03916-00 | Կշռաքար ճեղքով, դատարկ, 1 գ | 20 | |
| 2.17 | 02407-00 | Կշռաքարի բռնիչ, արծաթե բրոնզե, 1 գ | 1 | |
| 2.18 | 11207-20 | Լուսային արգելք, կոմպակտ | 2 | |
| 2.19 | 11307-00 | Լուսային արգելքի բռնիչ | 2 | |
| 2.20 | 13604-99 | Ժամանակաչափ 4-4 | 1 | |
| 2.21 | 07363-01 | Միացնող/կապող լար, 32 Ա, 1000 մմ, կարմիր | 4 | |
| 2.22 | 07363-02 | Միացնող/կապող լար, 32 Ա, 1000 մմ, դեղին | 5 | |
| 2.23 | 07363-04 | Միացնող/կապող լար, 32 Ա, 1000 մմ, կապույտ | 5 | |
| 2.24 | 48911-00 | Շարժական կշեռք, OHAUS CS2000E | 1 | |
| 3 | * P2120200 * | Էլաստիկության մոդուլ / Youngs Modulus: | | € 1 900,00 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3.1 | 03013-00 | Չափող գործիք 10/0.01 մմ | 1 | |
| 3.2 | 03013-01 | Չափող գործիքի բռնիչ | 1 | |
| 3.3 | 17570-00 | Տափակ ձողեր, հավաքածու | 1 | |
| 3.4 | 03015-00 | Ճեղքով ասպանդակ | 1 | |
| 3.5 | 02049-00 | Դանակի ծայրով գնդերիք | 2 | |
| 3.6 | 02204-00 | Տափակ կշեռքի բռնիչ | 1 | |
| 3.7 | 03060-01 | Ձեռքի առաձգական կշեռք 1 N | 1 | |
| 3.8 | 02002-55 | Շտատիվ/ հաստատոց PHYWE | 2 | |
| 3.9 | 02031-00 | Օժանդակ լար, չժանգոտվող պողպատ, l = 250 մմ, d = 10 մմ | 2 | |
| 3.10 | 02033-00 | Օժանդակ լար, չժանգոտվող պողպատ, 750 մմ | 1 | |
| 3.11 | 02054-00 | Աջ անկյունային սեղմակ/մամլակ | 5 | |
| 3.12 | 02205-01 | Ճեղքով կշռաքար, սև, 10 g | 10 | |
| 3.13 | 02206-01 | Ճեղքով կշռաքար, սև, 50 g | 6 | |
| 3.14 | 03010-00 | Vernier կալիպեր չժանգոտվող պողպատ 0-160 մմ, 1/20 | 1 | |
| 3.15 | 09936-00 | Չափերիզ, l = 2 մ | 1 | |
| 3.16 | 02090-00 | Կարթաթել, l. 100մ | 1 | |
| 4 | * P2150100 * | Մետաղալարերի վիբրացիա: | | € 6 990,00 |
| 4.1 | 03431-01 | Լարի լարվածության սարք, w. stem/գողուն | 1 | |
| 4.2 | 06090-00 | Նիկելի մետաղալար, d = 0.3 մմ, l = 100 մ | 1 | |
| 4.3 | 06092-00 | Kanthal մետաղալար, 19.1 Ohm/m, d = 0.3 մմ, l = 100 մ | 1 | |
| 4.4 | 06101-00 | Պղնձե-նիկելի մետաղալար, 6.9 Ohm/m, d = 0.3 մմ, l = 100 մ | 1 | |
| 4.5 | 06102-00 | Պղնձե-նիկելի մետաղալար, 4 Ohm/մ, d = 0.4 [illegible] | 1 | |
| 4.6 | 06106-02 | Պղնձե մետաղալար, d = 0.4 մմ, l = 50 [illegible] | [illegible] | |
| 4.7 | 06106-03 | Պղնձե մետաղալար, d = 0.5 մմ, l = 50 [illegible] | 1 | |
| 4.8 | 02004-55 | Պարկուճանման ամրակ/Թմբկազլ[illegible] | 1 | |
| 4.9 | 02010-00 | Նստարանի սեղմիչ PHYWE | 3 | |
| 4.10 | 02031-00 | Օժանդակ լար, չժանգոտվող պողպատ[illegible] 250 մմ, d = 10 մմ | 3 | |
| 4.11 | 02054-00 | Աջ անկյունային սեղմակ/մամլակ | 3 | |

Լք. 6/6.7 Լք 6/6.c

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4.12 | 02051-00 | Կեռավուն քթով ձող | 1 | |
| 4.13 | 02066-00 | Նշանասյուն | 2 | |
| 4.14 | 02090-00 | Կարթաթել, l. 100մ | 1 | |
| 4.15 | 03001-00 | Մետրի սանդղակ, l = 1000 մմ | 1 | |
| 4.16 | 03060-04 | Կշռաքար բալանս 100 N | 1 | |
| 4.17 | 03429-00 | Հարվածային մուրճ | 1 | |
| 4.18 | 08734-00 | Ֆոտոէլեմենտ | 1 | |
| 4.19 | 17049-00 | Կոթառ Lampholder E10, պատյան G1 | 1 | |
| 4.20 | 35673-03 | Փեղկավոր լամպ 6 V/3 W, E10, 10 հատ. | 1 | |
| 4.21 | 06024-00 | Բաշխիչ | 1 | |
| 4.22 | 11462-99 | 30 MHz էլեկտրոնային հիշողությամբ գունավոր էկրանով օսկիլյակոպ, | 1 | |
| 4.23 | 13625-93 | LF ուժեղացուցիչ, 220 V | 1 | |
| 4.24 | 13601-99 | Ընդհանուր հաշվիչ | 1 | |
| 4.25 | 07542-04 | Ամրացվող խրոցակով ծայրակալ | 1 | |
| 4.26 | 07542-20 | Ադապտեր/ռադիոընդունիչի սարք, BNC վարդակից/4 մմ խրոցակ | 1 | |
| 4.27 | 07542-26 | Ադապտեր/ռադիոընդունիչի սարք, BNC-խրոցակ/վարդակից 4 մմ | 2 | |
| 4.28 | 07542-21 | Էլեկտրական միացուցիչ, T տեսակ, BNC | 1 | |
| 4.29 | 07542-27 | Ադապտեր/ռադիոընդունիչի սարք, BNC վարդակից/4 մմ զույգ խրոցակ | 1 | |
| 4.30 | 07542-11 | Էկրանավորված կաբել, BNC, l = 750 մմ | 1 | |
| 4.31 | 07542-10 | Screened կաբել/թոկ, BNC, l 250 մմ | 1 | |
| 4.32 | 07362-01 | Միացնող/կապող լար, 32 Ա, 750 մմ, կարմիր | 1 | |
| 4.33 | 07362-04 | Միացնող/կապող լար, 32 Ա, 750 մմ, կապույտ | 1 | |
| 5 | P2150405 | Ռինիվերսալ հաշվիչով ակուստիկ դոպլերի էֆեկտ: | | € 5 650,00 |
| 5.1 | 13601-99 | Ընդհանուր հաշվիչ | 1 | |
| 5.2 | 03543-00 | Չափող միկրոֆոններ ուժեղացուցիչով | 1 | |
| 5.3 | 07496-10 | Տափակ մարտկոցներ, 9 Վ | 1 | |
| 5.4 | 13654-99 | PHYWE Թվային գեներատոր, USB | 1 | |
| 5.5 | 11207-20 | Թեքև փակոց, compact | 1 | |
| 5.6 | 11061-00 | Ավտոմեքենա շարժիչով | 1 | |
| 5.7 | 11061-02 | Ավտոմեքենայի կցորդ | 1 | |
| 5.8 | 11606-00 | Ռելսուղի, l 900 մմ | 1 | |
| 5.9 | 07922-01 | Battery cell/մարտկոց, 1.5 V, փոքրիկ, C տեսակ | 2 | |
| 5.10 | 02043-00 | Սամլակ | 1 | |
| 5.11 | 03524-01 | Բարձրախոս / Sound head, 8 ohms | 1 | |
| 5.12 | 45284-01 | Երկու էլեկտրոդի բռնակ | 1 | |
| 5.13 | 11202-03 | Ցուցանակ խրոցով, l 100 mm | 1 | |
| 5.14 | 02004-55 | Պարկուճամման ամրակ | 2 | |
| 5.15 | 02037-00 | Օժանդակ լար, չժանգոտվող պողպատ, l = 600 մմ, d = 10 մմ | 1 | |
| 5.16 | 09906-00 | Օժանդակ | 1 | |
| 5.17 | 07361-01 | Միացնող/կապող լար, 32 Ա, 500 մմ, կարմիր | 1 | |
| 5.18 | 07362-01 | Միացնող/կապող լար, 32 Ա, 750 մմ, կարմիր | 2 | |
| 5.19 | 07361-04 | Միացնող/կապող լար, 32 Ա, 500 մմ, կապույտ | 1 | |
| 5.20 | 07362-04 | Միացնող/կապող լար, 32 Ա, 750 մմ, կապույտ | 2 | |
| 5.21 | 07362-02 | Միացնող/կապող լար, 32 Ա, 750 մմ, դեղին | 1 | |
| 5.22 | 02060-00 | Խողովակի հենակ/կանգնակ | 1 | |
| 6 | | Ընդհանուր արժեքը | | € 20 545,00 |

Աշոտ Ղազարյան

ՀԱՀ Փոխնախագահ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2018 թվականի N Մ-392- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-Ի N Մ-294-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Արևամանուկ» ընտանիքի և երեխայի խնամքի հիմնադրամ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Արևամանուկ» ընտանիքի և երեխայի խնամքի հիմնադրամի 2018 թվականի մայիսի 7-ի գրությունը ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 16-ի N 1/14-2/8800-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 16-ի N 06/3-8/25429-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 27-ի «Արևամանուկ» ընտանիքի և երեխայի խնամքի հիմնադրամի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագի մասին» N Մ-294-Ա որոշման 1-ին կետում «80», «7,679.2» թվերը համապատասխանաբար փոխարինել «68», «9,024.73» թվերով և «Հյուսիսային» մաքսատուն-վարչություն» բառերը փոխարինել «Արևմտյան» մաքսատուն-վարչություն» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 393 - Ա
քաղ. Երևան**

# ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԽՐԻՄՅԱՆ» ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԱԿԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՈՆՏԱԺՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 3-ի N 01.1/14-2/7884-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի մայիսի 4-ի N 02/14/54419-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 3-ի N 06/3-8/22064-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող՝ 78,574,650 դրամ ընդհանուր արժողությամբ «Խրիմյան» թանգարանի հակահրդեհային համակարգի մոնտաժում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Էյ Ար-Այ Սի Թի» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04109976) 2018 թվականի ապրիլի 4-ին կնքված՝ N 04Շ/018 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում հակահրդեհային համակարգի մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 44,150,050 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի



մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Վարչատնտեսական բաժնի տնօրեն
Մուշեղ եպիսկոպոս Բաբայան
20 ապրիլ, 2018թ.

«Խրիմյան» թանգարանի հակահրդեհային համակարգի մոնտաժում

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է «Խրիմյան» թանգարանում կատարել հակահրդեհային համակարգի մոնտաժման աշխատանքներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործը (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Եկեղեցաշինական : |
| 6. | Ծրագրի բյուջեն | 78.574.650 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 04 ապրիլ, 2018- 01 սեպտեմբեր, 2018: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Խրիմյան» թանգարանի հակահրդեհային համակարգի մոնտաժման աշխատանքներ: Կապալառուին հանձնարարվող աշխատանքների արժեքը՝ համաձայն հաստատված նախահաշվի կազմում է 44.150.050 ՀՀ դրամ : Ինչպես նաև նախատեսվում է ներմուծում 34.424.600 ՀՀ դրամ արժողությամբ նյութեր և սարքավորումներ: Ընդհանուր գումարը կազմում է 78.574.650 ՀՀ դրամ ՝ առանց ԱԱՀ:<br>Աշխատանքները իրականացվելու է «Էյ Ար-Այ Սի Թի» ՍՊԸ-ի կողմից, (ՀվՀՀ 04109976 ), պայմանագիր 04Շ/018՝ կնքված 04 ապրիլ, 2018թ. : Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 04 ապրիլ, 2018 –01 սեպտեմբեր, 2018 թ. : |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Խրիմյան» թանգարանի հակահրդեհային համակարգի մոնտաժման աշխատանքներ: Կապալառուին հանձնարարվող աշխատանքների արժեքը՝ համաձայն հաստատված նախահաշվի կազմում է 44.150.050 ՀՀ դրամ, ինչպես նաև նախատեսվում է ներմուծում 34.424.600 ՀՀ դրամ արժողությամբ նյութեր և սարքավորումներ: Ընդհանուր գումարը կազմում է 78.574.650 ՀՀ դրամ ՝ առանց ԱԱՀ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | չի նախատեսվում |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ֆինանսական բաժնի հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ - 394 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N Մ-147-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N 01.1/14-2/8490-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/24251-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված սարքավորումը (մեկ տեղ, 312 կգ ընդհանուր քաշով, 224,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, ԵՏՄ բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի մարտի 16-ի «Լալշ» եզդիների Ազգային միավորում» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի եզդիների «Մալակե Տաուսի» տաճարի կառուցում և հարակից տարածքների կառուցապատում» ծրագրի մասին» N Մ-147-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 395 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 16-Ի N Մ-1311-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(«Արագիլ» հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N 01.1/14-2/8501-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մայիսի 11-ի N ՆՁ/22.2/5424-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/24168-18 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Արագիլ» հիմադրամի 2018 թվականի մայիսի 10-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հունվարի 16-ի «Արագիլ» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն վերարտադրողական բժշկությանը» ծրագրի մասին» N Մ-1311-Ա որոշմամբ հաստատված ծրագիրի իրականացման ժամկետը երկարաձգել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը:

2. Սահմանել, որ «Արագիլ» հիմնադարմի կողմից ձեռք բերված դեղորայքը՝ (166 կգ ընդհանուր քաշով, 33,626.11 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» ՄՎ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 396 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-Ի N Մ-792-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 8-ի N 01.1/14-2/8288-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 8-ի N 06/3-8/23421-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի սեպտեմբերի 2-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Համայնքային տնային խնամք և առողջ ծերացում» ծրագրի մասին» N Մ-792-Ա (2016 թվականի դեկտեմբերի 28-ի N Մ-1274-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2018 թվականի մայիսի 3-ին կնքված պայմանգրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի մատակարարում՝ 2,115,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 397 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 5-ի N 01.1/14-2/8128-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 3-ի N 06/3-8/22067-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա, դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա, 2017 թվականի հուլիսի 14-ի N Մ-593-Ա, օգոստոսի 30-ի N Մ-709-Ա և հոկտեմբերի 11-ի Մ-877-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Քեյր Բիլդինգ Սերվիզիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00457276) 2018 թվականի ապրիլի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ներքին հարդարման և ինժեներական ցանցերի մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 9,522,336 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 398 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N Մ-307-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 7-ի N 01.1/14-2/8169-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 3-ի N 06/3-8/22066-18 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Այբ» կրթական հիմնադրամի 2018 թվականի ապրիլի 23-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Այբ» կրթական հիմնադրամ)» N Մ-307-Ա որոշման 1-ին կետի «482,293,538 դրամի չափով» բառերը փոխարինել «399,974,568 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

8

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 399 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N Մ-334-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(Հայկական կարմիր խաչի ընկերություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 15-ի N 1/14-2/8717-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 15-ի N 06/3-8/24766-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 00006023) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 21-ի «Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «Արտակարգ իրավիճակներին բարելավված նախապատրաստում և արձագանքում Հարավային Կովկասում» ծրագրի մասին» N Մ-334-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՍիՓիԷս Օյլ Քորփորշեյշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02614085) 2018 թվականի մայիսի 5-ին կնքված պայմանգրում նշված գործարքը, որով նախատեսվում է բենզինի մատակարարում՝ 627,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մայիսի 2018 թվականի N Մ- 400 - Ա
քաղ. Երևան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N Մ-1264-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 16-ի N 1/14-2/8760-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 15-ի N 06/3-8/24761-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի՝ 2016 թվականի դեկտեմբերի 27-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N Մ-1264-Ա (2017 թվականի հունվարի 27-ի Մ-036-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Կրիվոյշին» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07604029) 2018 թվականի ապրիլի 1-ին կնքված պայմանագրով նշված գործարքը, որով նախատեսվում է բետոնե խառնուրդի մատակարարում՝ 3,575,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 401 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N Մ-030-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**
(«Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 16-ի N 1/14-2/8755-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 15-ի N 06/3-8/24929-18 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի 2018 թվականի մայիսի 14-ի գրությունը* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1264-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամ)» N Մ-030-Ա որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետում «59,976,000 դրամի չափով» բառերը փոխարինել «73,873,659 դրամի չափով» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

02508251

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 402 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 7-ի N 01.1/14-2/8166-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մայիսի 10-ի N ՆՁ/22.2/5344-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/24163-18 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Միացյալ ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամի (unicef) կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով Ազգային իմունականխարգելման ծրագրի շրջանակներում ստացված բեռի (պատվաստանյութ, 33 տեղ, 924.6 կգ ընդհանուր քաշով, 141,750 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 11,503.80 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:
3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**18 մայիսի 2018 թվականի N Մ- 403 - Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 8-ի N 01.1/14-2/8309-18, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2018 թվականի մայիսի 8-ի N ԻԱ/ԳՂ-2/4155-18, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2018 թվականի մայիսի 10-ի N 03/07-1/5129-18, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2018 թվականի մայիսի 10-ի N ՆՁ/22.2/5338-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 8-ի N 06/3-8/23483-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Armenian Support Project» ոչ առևտրային կազմակերպության կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի հասցեով ստացված բեռի (ցածր պրոտեինով ալյուրի խառնուրդ, 15 տեղ, 225 կգ զուտ քաշով, 839.25 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 679.65 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ու բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 404 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ )**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 16-ի N 1/14-2/8762-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 15-ի N 06/3-8/24768-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ապրանքները (լողացող շատրվանի համար նախատեսված սարքավորումներ, 15,314,116.73 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի 2800 ամյակին նվիրված ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ. Լուսավորիչի փողոցների սահմաններում պարփակված այգու բարեկարգում և հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ հաստատված (2018 թվականի մարտի 16-ի N Մ-162-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**22 մայիսի 2018 թվականի N Մ - 405 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N Մ- 259 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N1**
**(«Առողջ կյանքի ուղի»)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի մայիսի 17-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված բժշկական սեղաններ (2 տեղ, 40 կգ ընդհանուր քաշով, 300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 232,450 դրամ, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բժշկական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-259-Ա որոշմամբ հաստատված (2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-820-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-481-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-092-Ա, 2017 թվականի ապրիլի 27-ի N Մ-350-Ա և 2018 թվականի մարտի 17-ի N Մ-187-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:
2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**22 մայիսի 2018 թվականի N Մ - 406 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 23-Ի N Մ- 259 -Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Առողջ կյանքի ուղի»)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի մայիսի 17-ի որոշման նախագծի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է**.

1. Սահմանել, որ «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված բժշկական սարքավորումները (15 տեղ, 70 կգ ընդհանուր քաշով, 3,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 450 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի ապրիլի 23-ի «Առողջ կյանքի ուղի» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Բժշկական կենտրոնի կառուցում» ծրագրի մասին» N Մ-259-Ա որոշմամբ հաստատված (2009 թվականի դեկտեմբերի 11-ի N Մ-820-Ա, 2013 թվականի հունիսի 7-ի N Մ-481-Ա, 2015 թվականի հունվարի 30-ի N Մ-092-Ա, 2017 թվականի ապրիլի 27-ի N Մ-350-Ա և 2018 թվականի մարտի 17-ի N Մ-187-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 407 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (N1)

**(«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ )**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 16-ի N 1/14-2/8775-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 16-ի N 06/3-8/25141-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ապրանքները (լողացող շատրվանի համար նախատեսված սարքավորումներ, 6,936,271.18 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի 2800 ամյակին նվիրված ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ. Լուսավորիչի փողոցների սահմաններում պարփակված այգու բարեկարգում և հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-068-Ա որոշմամբ հաստատված (2018 թվականի մարտի 16-ի N Մ-162-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 408 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N Մ-068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ
**(«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 16-ի N 1/14-2/8773-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 11-ի N 06/3-8/24250-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է***

1. Սահմանել, որ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի (ՀՎՀՀ՝ 02269952) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 26-ի «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Երևանի 2800 ամյակին նվիրված ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ. Լուսավորիչի փողոցների սահմաններում պարփակված այգու բարեկարգում և հիմնանորոգում» ծրագրի մասին» N Մ-068-Ա (2018 թվականի մարտի 16-ի N Մ-162-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ավետիսյան Քոնթրաքշն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01849105) 2018 թվականի ապրիլի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի 2800 ամյակին նվիրված ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ. Լուսավորիչի փողոցների սահմաններում պարփակված այգում տեղադրվող արձանների (2 հատ), պատվանդանների, օբելիսկի և նստարանների հիմքերի կառուցման ու սալիկապատման շինարարական աշխատանքների իրականացում՝ 25,585,300 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գաշես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04222383) 2018 թվականի ապրիլի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի 2800 ամյակին նվիրված ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ. Լուսավորիչի փողոցների սահմաններում պարփակված այգու շատրվանների թիվ 1-5 բլոկների կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 110,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.



3) «Հայր և որդի Մանվելյաններ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01238222) 2018 թվականի ապրիլի 17-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի 2800 ամյակին նվիրված ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ. Լուսավորիչի փողոցների սահմաններում պարփակված այգու շատրվանների թիվ 6-10 բլոկների կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 110,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ԿԱՐԿԱՍ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 0054589) 2018 թվականի ապրիլի 20-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Երևանի 2800 ամյակին նվիրված ք. Երևանի Ա. Մյասնիկյանի արձանի ետնամասում գտնվող Իտալիայի, Բեյրութի, Խորենացու և Գ. Լուսավորիչի փողոցների սահմաններում պարփակված այգու շատրվանների թիվ 0 բլոկի կառուցման շինարարական աշխատանքների իրականացում՝ 40,000,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**21 մայիսի 2018 թվականի N Մ - 409 - Ա**

**(Որոշումն ընդունվել է 2018 թվականի մայիսի 18-ի նիստին)**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՄՈԼԵԿՈՒԼԱՅԻՆ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 15-ի N 1/14-2/8719, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2018 թվականի մայիսի 21-ի N 03/07-1/5521-18 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 15-ի N 06/3-8/24749-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի «Seeding Labs» ոչ առևտրային կազմակերպության կողմից աջակցության նպատակով Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեով ստացված բեռի (օգտագործված լաբորատոր սարքավորումներ և պարագաներ, մեկ բեռնարկղ, 161 տեղ, 2,010 կգ ընդհանուր քաշով, 25,380 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 740,678.40 դրամ, «Արարատյան» մաքսատուն-վարչություն ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային ակադեմիայի «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳ** | **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**23 մայիսի 2018 թվականի N Մ- 410 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՏՈՄԱՏՈԼՈԳՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2018 թվականի մայիսի 23-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ատամնաբուժության միջազգային ակադեմիայի (Academy of Dentistry International) կողմից Հայաստանի ստոմատոլոգների ասոցիացիայի հասցեով ուղարկված բեռի (սերտիֆիկատներ, բրոշյուրներ, շքանշաններ և ժապավեններ՝ 17 տեղ, 213 կգ ընդհանուր քաշով, 371 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի ստոմատոլոգների ասոցիացիային՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

Ի լրումն մեր 2018 թվականի մայիսի 23-ի
N 15/15.11/7877-18 ելիցի

24 մայիսի 2018թ.

No 15/15.11/7993-18

ՈՒՂՂՈՒՄ

Ձեզ ուղարկված Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 23-ի N Մ- 410 -Ա որոշման 1-ին կետում «17 տեղ, 213 կգ ընդհանուր քաշով, 371 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն» բառերը փոխարինել «1 տեղ, 4.54 կգ ընդհանուր քաշով, 371 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 242.05 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն» բառերով:

ՀՀ կառավարության բարեգործական
ծրագրերի համակարգման հանձնաժողով

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**18 մայիսի 2018 թվականի N Մ- 411 - Ա**
**քաղ. Երևան**

## ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2018 թվականի մայիսի 25-ի N 01.1/14-2/9304-18, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2018 թվականի փետրվարի 19-ի N 02/14/2879-18 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2018 թվականի մայիսի 17-ի N 06/3-8/25498-18 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի կողմից (ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ՝ 04717139) իրականացվող՝ 333,563,140 դրամ ընդհանուր արժողությամբ «Համայնքների զարգացում» ծրագիրը (կցվում է):

2. Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:



4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան
միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամի
Գործադիր տնօրեն՝ Կարեն [illegible]յանի կողմից
«01» մայիսի 2018թ.

«Համայնքների զարգացում» Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամը (ՀԿՍ) 1997թ.-ից ի վեր բարեգործական և զարգացման բազմաթիվ ծրագրեր է իրականացնում Հայաստանի Հանրապետության և Արցախի տարածքներում: Ծրագրի նպատակն է՝ նպաստել համայնքների հզորացմանը Հայաստանում և Արցախում, զարգացնել հասարակական կազմակերպությունների կարողությունները, ապահովել հնարավոր աղետներին պատրաստված ու արագ արձագանքումը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Հաց աշխարհին» (Bread for the World), Կառոլին Միխայելս 10115, Բեռլին, Գերմանիա<br>ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, Պետրոս Ադամյան 14, Երևան, ՀՀ<br>«Օտտո պեր Միլե» (Otto per Mille), Վիյա Ֆիրենզե, 38, 00184 Հռոմ, Իտալիա<br>«Եկեղեցիների համատեղ գործողություններ Ալյանս» (ACT Alliance), Ռու դե Ֆերնի 150, Շվեյցարիա<br>Շվեյցարիայի Մալտայի Օրդենի «Օգնություն և օժանդակություն» Հիմնադրամ, Շիլրոմատ 5, 3185 Շմիտ, Շվեյցարիա<br>Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ՝ սեփական միջոցներից, ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին |
| 4. | Ծրագիրը կատարողը | Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ<br>Հայաստանի Հանրապետություն 1101, Արմավիրի մարզ, ք. Վաղարշապատ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին<br>ՀՎՀՀ՝ 04717139 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության բոլոր մարզեր, Արցախ:<br>Սոցիալական, կրթական, բնապահպանական, արտակարգ իրավիճակների արձագանքման բնագավառներ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 333,563,140 ՀՀ դրամ (50,788,000 ՀՀ դրամ ակնկալվում է ԱԱՀ-ից ազատում) |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Եկեղեցու (ՀԱԵ) թեմեր, հասարակական կազմակերպություններ, շահառուները՝ Հայաստանի Հանրապետության և Արցախի համայնքները, հասարակական և եկեղեցահեն կազմակերպությունները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.05.2018թ. – 15.03.2020թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2018-2020թթ.-ին աշխատանքներ են իրականացվելու համայնքային համապարփակ զարգացման, եկեղեցական սոցիալական ծառայության, կարողությունների զարգացման ողղություններով: ՀԿՍ-ի կողմից իրականացվելու է ծրագրերի մշտադիտարկում, կարողությունների զարգացման դասընթացներ, փորձի փոխանակման և ֆոնդահայթայթման միջոցառումներ, այցելություններ ՀԿՍ-ի ծրագրերի իրականացման վայրեր, ներկայացվելու են պահանջվող հաշվետվություններ, անցկացվելու է կիսամյակային աուդիտորական ստուգում: Այցելություններն իրականացնում են ՀԿՍ-ի աշխատակիցները ՀԿՍ-ի փոխադրամիջոցներով, որոնք օգտագործվում են նաև բարերարների այցերի ընթացքում:<br>**Համապարփակ համայնքային զարգացման** համար ՀԿՍ-ի և ՀԱԵ թեմերի կողմից հիմնադրվել և ֆինանսավորում են շուրջ 10 համայնքային կենտրոններ, որոնք գործում են Աշտարակ, Գավառ, Գյումրի, Իջևան, Վանաձոր, Վարդենիս քաղաքներում, Գայ, Քարակերտ, Ջրվեժ, Մեծավան գյուղերում և բազմաթիվ ուղղություններով ծրագրեր են իրականացնում: Կենտրոնները հիմնվել են Հայ Առաքելական Եկեղեցու թեմերին կից, տարեկան սպասարկում են ընդհանուր թվով շուրջ 10,000 շահառու հիմնականում անապահով ընտանիքների երեխաների, գործազուրկ երիտասարդների, կանանց, տարեցների: Կենտրոններում իրականացվում է սոցիալական աշխատանք, արտադպրոցական կրթություն, արհեստագործական ուսուցում, մատուցվում է հոգեբանական և հոգևոր խորհրդատվություն, իրականացվում են մշակութային և բարեգործական միջոցառումներ: Կենտրոնների աշխատանքներն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստում են |

աշխատատեղերի ստեղծմանը կամ պահպանմանը: Կենտրոնները համարվում են փոքրաքանակ կամ մեծաքանակ աշխատակազմ ունեցող գործատուներ: Քաղաքներում գործող համայնքային կենտրոնները (Գավառ, Գյումրի) լուրջ ռեսուրսային բազա են հասարակական կազմակերպությունների, պետական հաստատությունների, ՏԻՄ և այլ կառույցների համար: Գյուղերում գործող համայնքային կենտրոնները դարձել են համայնքային կյանքի ինքնակազմակերպման կարևոր օղակներ: Կենտրոններում մատուցվող ծառայությունները էական նշանակություն ունեն հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար: Ծրագրի շրջանակներում ՀԿՍ-ն շարունակելու է դրամաշնորհներ տրամադրել վերոնշյալ կենտրոններին:

**Սոցիալական և զարգացման** ուղղության շրջանակներում տարբեր համայնքներում իրականացվում են համայնքների կարիքների լուծմանն ուղղված ծրագրեր՝ մանկապարտեզների վերանորոգման, արտադպրոցական և արհեստագործական կրթության, շրջակա միջավայրի պահպանման, արտակարգ իրավիճակներին իրազեկման և արագ արձագանքման, սոցիալ-տնտեսական զարգացման, կազմակերպվում են մշակութային հանդեսներ և ամանորյա միջոցառումներ, սոցիալապես անապահով ընտանիքներին և խմբերին մատուցվում են մասնագիտական խորհրդատվություն և ծառայություններ, տոնական փաթեթներ են բաշխվում սահմանամերձ գյուղերի երեխաներին:

**Կարողությունների զարգացման** համար ՀԿՍ-ն կազմակերպում և իրականացնում է դրամաշնորհային ծրարգիր-առաջարկ գրելու, ծրագրերի կառավարման և կազմակերպական զարգացման վերաբերյալ դասընթացներ ՀԱԵ թեմերի հոգևորականների, եկեղեցահեն և այլ հասարակական կազմակերպությունների համար: Դասընթացի բաց հայտարարությունը լայնորեն տարածվում է ՀԿՍ-ի կողմից սոցիալական կայքերի և շրջաբերականների միջոցով, ստացված դիմումները քննվում են ՀԿՍ-ի կողմից հաշվի առնելով դիմորդ կազմակերպության համահունչ լինելը ՀԿՍ-ի ռամավարական ուղղություններին՝ համապարփակ համայնքային զարգացման, սոցիալական ծառայության, արտակարգ իրավիճակների արձագանքման; ՀԱԵ թեմակալների երաշխավորումը, կազմակերպության կամ դիմողի ոլորտում 5 տարուց պակաս աշխատանքային փորձ ունենալու

հանգամանքը, դիմումի մեջ դասընթացին մասնակցության դրդապատճառի որակյալ հիմնավորումը և ստացված գիտելիքների օգտագործման հետագա պլանը: ՀԿՍ-ն կազմակերպում է նաև փորձի փոխանակում՝ գործընկերների կարողությունները զարգացնելու և համագործակցության նոր հնարավորություններ ընձեռելու համար: Դասընթացների շրջանավարտները ՀԿՍ-ի ֆինանսավորմամբ տարբեր ծրագրեր են իրականացնում իրենց համայնքների խնդիրները հոգալու նպատակով:

ՀԿՍ-ի աշխատակազմը մշտապես իր ուշադրության տակ է պահում վերոնշյալ ծրագրերի աշխատանքները, այցելում է ծրագրերի իրականացման վայրեր և վերահսկում դրանց ընթացքը, հանդիպում ծրագրերի շահառուներին և շահագրգիռ կողմերին, մատուցում ծրագրերի իրականացման վերաբերյալ անհրաժեշտ խորհրդատվություն տեղերում՝ հնարավորինս արդյունավետ իրականացնելու ծրագրած աշխատանքները: Դասընթացների, փորձի փոխանակման և մշտադիտարկման այցերի համար ՀԿՍ-ն օգտագործում էր իր 3 փոխադրամիջոցները: 2017թ.-ին ներմուծված մեքենան օգտագործվում է հանդիպումների և բարերարների այցերի ընթացքում: Հաշվի առնելով 2010-2011թթ.-ին ներմուծված 2 փոխադրամիջոցների մաշվածությունը՝ մշտադիտարկման և հեռավոր շրջաններ այցեր շարունակելու համար և ՀԿՍ-ի աշխատակազմի թվին բավարար չլինելը, այդ փոխադրամիջոցներից 1-ը վաճառվել է, իսկ մյուսը վաճառվում է՝ 1 մինի-վան ձեռք բերելու համար: Ձեռք բերված փոխադրամիջոցը ծառայելու է այս և ՀԿՍ-ի նմանատիպ այլ ծրագրերի շարունակական և որակյալ իրականացումն ապահովելու համար:

Նախատեսված ծախսերը՝

1. Դրամաշնորհներ՝ 136,190,000 ՀՀ դրամ (չի ակնկալվում ԱԱՀ-ից ազատում) հետևյալ ուղղությունների համար՝
   - Համապարփակ համայնքային զարգացում՝ 76,020,000 ՀՀ դրամ - ՀԱԵ թեմերին,
   - Սոցիալական և զարգացման ծրագրեր՝ 48,670,000 ՀՀ դրամ - հասարակական կազմակերպություններին և ՀԱԵ թեմերին,
   - Կարողությունների զարգացում՝ 11,500,000 ՀՀ դրամ - ՀԿՍ-ի կողմից իրականացված դասընթացներին մասնակցած հասարակական կազմակերպություններին ու ՀԱԵ թեմերին:
2. ՀԿՍ-ի կողմից իրականացվող ծախսեր՝ 197,373,140 ՀՀ դրամ, այդ թվում՝

| | | |
|---|---|---|
| | | – Սոցիալապես անապահով ընտանիքներին և խմբերին մասնագիտական խորհրդատվություն և սոցիալական ծառայությունների մատուցում՝ 23,374,140 ՀՀ դրամ,<br>– Դասընթացներ և մասնագիտական խորհրդատվություն՝ 11,165,000 ՀՀ դրամ,<br>– Ծրագրային աշխատակազմի աշխատավարձ (7 մարդ)՝ 57,911,000 ՀՀ դրամ,<br>– Վարչական աշխատակազմ (8 մարդ)՝ 40,539,000 ՀՀ դրամ,<br>– Ծրագրի անկախ գնահատում՝ 9,231,000 ՀՀ դրամ,<br>– Գործուղումներ՝ 1,349,000 ՀՀ դրամ,<br>– Կոմունալ ծախսեր՝ 2,147,000 ՀՀ դրամ,<br>– Հեռահաղորդակցության ծախսեր՝ 869,000 ՀՀ դրամ,<br>– Հյուրանոցային ծախսեր՝ 7,000,000 ՀՀ դրամ,<br>– Վառելիք՝ 4,910,000 ՀՀ դրամ,<br>– Գրենական պիտույքներ/տպագրություն՝ 4,050,000 ՀՀ դրամ,<br>– Ներկայացուցչական ծախսեր, հյուրասիրություն՝ 3,590,000 ՀՀ դրամ,<br>– Հեռուստահաղորդումներ՝ 5,000,000 ՀՀ դրամ,<br>– Սպասարկման և նորոգման ծախսեր՝ 2,077,000 ՀՀ դրամ,<br>– Աուդիտորական ստուգում՝ 6,516,000 ՀՀ դրամ,<br>– Գնումներ/մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում/ներմուծում՝ 9,000,000 ՀՀ դրամ,<br>– Գրասենյակային զույք՝ 500,000 ՀՀ դրամ,<br>– Չկանխատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերում՝ 8,145,000 ՀՀ դրամ<br>Ընդամենը՝ 333,563,140 ՀՀ դրամ: |
| **10.** | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | – Կոմունալ ծախսեր՝ 2,147,000 ՀՀ դրամ (չի ակնկալվում ԱԱՀ-ից ազատում),<br>– Հեռահաղորդակցության ծախսեր՝ 869,000 ՀՀ դրամ (չի ակնկալվում ԱԱՀ-ից ազատում),<br>– Հյուրանոցային ծախսեր՝ 7,000,000 ՀՀ դրամ,<br>– Վառելիք՝ 4,910,000 ՀՀ դրամ,<br>– Գրենական պիտույքներ/տպագրություն՝ 4,050,000 ՀՀ դրամ,<br>– Ներկայացուցչական ծախսեր, հյուրասիրություն՝ 3,590,000 ՀՀ դրամ, |

| | | |
|---|---|---|
| | | – Հեռուստահաղորդումներ՝ 5,000,000 ՀՀ դրամ,<br>– Սպասարկման և նորոգման ծախսեր՝ 2,077,000 ՀՀ դրամ,<br>– Աուդիտորական ստուգում՝ 6,516,000 ՀՀ դրամ,<br>– Գնումներ/մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում/ներմուծում՝ 9,000,000 ՀՀ դրամ,<br>– Գրասենյակային զույք՝ 500,000 ՀՀ դրամ,<br>– Չկանխատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերում՝ 8,145,000 ՀՀ դրամ: |
| **11.** | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | – ՀԿՍ-ի վարչական անձնակազմի աշխատավարձ (8 մարդ)՝ 40,539,000 ՀՀ դրամ,<br>– Վարչական ծախսեր (սպասարկում, նորոգում, կոմունալ, հեռահաղորդակցություն)՝ 5,093,000 ՀՀ դրամ,<br>– Աուդիտորական ստուգում՝ 6,516,000 ՀՀ դրամ,<br>– Մարդատար ավտոմեքենայի ձեռքբերում և ներմուծում 9,000,000 ՀՀ դրամ,<br>– Գրասենյակային զույք՝ 500,000 ՀՀ դրամ:<br>Ընդամենը՝ 61,648,000 ՀՀ դրամ: |
| **12.** | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀԿՍ-ն համագործակցում է ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինների, մարզպետարանների, ՊՈԱԿ-ների, ՀԱԵ թեմերի, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ, որոնք գործունեություն են ծավալում ՀԿՍ-ի կողմից աջակցվող ծրագրերի իրականացման վայրերում: |
| **13.** | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմները, հաշվետվությունը | Ծրագրի վերահսկողությունն իրականացնում են՝ ՀԿՍ-ի հոգաբարձուների խորհուրդը՝ նախագահ Գերաշնորհ Տ. Մկրտիչ եպիսկոպոս Պռոշյան, Արագածոտնի թեմի առաջնորդ: Ամենօրյա վերահսկողությունն իրականացնում է ՀԿՍ-ի գործադիր տնօրեն դ-ր Կարեն Նազարյանը: ՀԿՍ պարբերաբար այցեր են կատարում ֆինանսավորող կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև կազմակերպվում է կիսամյակային աուդիտ: Սահմանված կարգով հաշվետվություն է ներկայացվելու Հայաստանի Հանրապետության Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**29 մայիսի 2018 թվականի N Մ- 412 -Ա**
**քաղ. Երևան**

**«ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՑՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով 2018 թվականի մայիսի 22-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից ձեռք բերված վերականգնողական թերապիայի համար անհրաժեշտ ապրանքների (85 կգ ընդհանուր քաշով, 2,767.20 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 475 ԱՄՆ-ի դոլար, Արևմտյան մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է անհատույց հանձնել Կապանի մանկական կենտրոնին (վերականգնման փուլում է): Մինչ կենտրոնի բացումը բեռը ժամանակավոր օգտագործվելու է «Արաբկիր» ԲՀ-ԵԴԱ ինստիտուտում:

2. «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպությանը՝ բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն գործընթացի վերաբերյալ:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ